Azg
Ազգ
8 ՄԱՐՏ 2007 ՇԱԲԱԹ 43 (3695)

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ ծայրագույն պատրիարք եւ Ամենայն հայոց կաթողիկոսի շնորհավորական ուղերձը կանանց տոնի առիթով

Մայր աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական մեր օրհնությունն ենք բերում բոլոր տիկնանց եւ օրիորդներին եւ շնորհավորում կանանց տոնի՝ Մարտի 8-ի առիթով:

Աղոթում ենք առ Ամենակալն Աստված, որ տերունաշնորհ երջանկությունը միշտ արդի մեր մայրերի, քույրերի ու դստերերի սրտերում, եւ նրանք շարունակեն ազնիվ ու նվիրյալ ընթացքով ծառայել իրենց ընտանիքների բարությանը եւ հայրենիքի զարթոնքին ու առաջընթացին:

Թող Աստված իր ամենախնամ Սուրբ աջի հովանու ներքո պահի եւ պահպանի բոլոր տիկնանց եւ օրիորդաց, պարգեւի քաջառողջություն ու արեւշատություն եւ հանապազ օրհնությամբ ու երկնառաք բյուր բարիքներով բարեզարդի նրանց կյանքը:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհները, սերն ու խաղաղությունը թող լինեն Ձեզ ամենքիդ հետ. Ամեն:

Մարտի 8՝ ժողովուրդների եւ ծաղիկների տոն

Մարտի 8-ը շատ գեղեցիկ եւ ուրախ տոն է՝ ծաղիկների, նրբագեղության, նաեւ հերոսության տոն: Կնոջ հերոսությունն ու գեղեցկությունն են փառաբանել արվեստագետները: Շատ նկարիչներ կտավներ են նվիրել, բանաստեղծները ջերմ ու այրող խոսքեր են գրել, կոմպոզիտորները երաժշտություն են հորինել կնոջ անմահ գեղեցկությունը փառաբանելու:

Մեր կենցաղում կինը տնային տնտեսուհի է, բայց ցանկալի կլիներ տեսնել կանանց նաեւ ղեկավար պաշտոններում, օրինակ՝ խորհրդարանում:

Մարտի 8-ին՝ գեղեցկության այս օրը սրտանց շնորհավորում եմ բոլոր կանանց եւ աղջիկներին: Ցանկանում եմ բոլորին քաջառողջություն, հաջողություն եւ, իհարկե, գեղեցկություն:

ԳԵՈՐԳԻ ՅԱՐԱՆՅԱՆ

Վահան Հովհաննիսյանը կողմնակի՞ց է իշխանափոխությանը

«Եթե ժողովուրդը գտնում է, որ իշխանափոխություն է պետք, ապա պետք է անի, չսպասելով՝ թույլ կտան, թե ոչ», ասել է ԱԺ փոխնախագահ, ՀՅԴ բյուրոյի անդամ Վահան Հովհաննիսյանը երեկ, Մամուլի ազգային ակումբում ունեցած ամսվա ասուլիսի ընթացքում: Նա ասել է, որ ինքը ոչ թե խոչընդոտում, այլ անգամ կոչ է անում ժողովրդին իշխանափոխություն կատարել: Դրա համար, ասել է նա, կարեւոր է, որ ընտրություններին ժողովուրդը տեր լինի իր ձայներին առաջին հերթին մասնակցելով ընտրություններին եւ, երկրորդ՝ պայքարի իր ձայնի համար: «Ուրեմն, ասել է Վ. Հովհաննիսյանը, եղեք ակտիվ, մի՛ ծախվեք»:

Քաղաքական շրջանակներն ԱԺ փոխնախագահի այս համարձակ ելույթը մեկնաբանում են այն հանգամանքով, որ օրերս իշխանության վերին ոլորտներում՝ ապագա խորհրդարանում իշխանամետ եւ իշխանական կուսակցությունների «դերաբաշխում» կամ զբաղեցնելիք տեղերի բաշխում է տեղի ունեցել, որտեղ ՀՅԴաշնակցությանը «տրվել» է ընդամենը 8 տեղ, ինչը, բնականաբար, դժգոհ է թողել կուսակցության ներկայացուցիչներին: Ահա թե ինչու, ասում են այդ շրջանակները, Դաշնակցությունը շանտաժային մարտավարություն է որդեգրել այս օրերին:

ՎԱՇԻՆԳՏՈՆ

Մենատում հետաձգվեց Դինքի սպանությունը դատապարտող բանաձեւի քվեարկությունը

Հուսանք, որ նույնը չի կատարվի Ներկայացուցիչների պալատին ներկայացված Հայոց ցեղասպանության բանաձեւի հետ

ՀՐԱՆՈՒՇ ՅԱՔԻԲՅԱՆ

Երեկ ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում քվեարկության էր դրվելու Հրանտ Դինքի սպանությունը դատապարտող բանաձեւը, որտեղ թուրքական իշխանություններին կոչ էր արվում նաեւ չեղյալ հայտարարել քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածն ու դիվանագիտական հարաբերություններ հաստատել Հայաստանի հետ: Թեեւ Սենատի հանձնաժողովին դեմոկրատ սենատոր Ջո Բայդենի ներկայացրած բանաձեւը քննարկվել է նիստում, սակայն տեսքին առարկել է հանրապետական Ռիչարդ Լուգարը: Այսպիսով, հաջորդ նիստին է հետաձգվել բանաձեւի քվեարկությունը, որի գումարումը ենթադրվում է երկու շաբաթ հետո:

Բանաձեւի քվեարկության հետաձգմանը գոհունակությամբ է արձագանքել թուրքական հանրային հեռուստատեսությունը: CNN-Turk-ը դա պատճառաբանել է տեսքի հիմնավորման բաժնում տեղ գտած Հայոց ցեղասպանություն արտահայտությամբ եւ ավելացրել է. «Անկարան մտահոգված էր, որ ներկա ձեւակերպմամբ ընդունվելու դեպքում բանաձեւն օրինակ կծառայի: Բուշի վարչակարգը ըմբռնումով է վերաբերվում Անկարայի մտահոգություններին»:

Բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ նախքան Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի հաջորդ նիստը, սենատորներ Լուգարն ու Բայդենը կվերանայեն Դինքի սպանությունը դատապարտող բանաձեւի ձեւակերպումներն ու համատեղ նոր տեքստ կկազմեն: Ի դեպ, սենատոր Լուգարը բանաձեւի քվեարկությանն առարկելիս պահանջել է, որ տեքստից հանվի Հայոց ցեղասպանություն արտահայտությունը:

Տես էջ 3

«Ցեղասպանության բանաձեւին լուրջ չվերաբերվելու» կոչ Թուրքիային

«Վաշինգտոն փոստի» մեկնաբան Դեյլ Ջեքսոնը «Պանարմենիան.նեթ» կայքէջի հաղորդմամբ, կոչ է անում Թուրքիային՝ «լուրջ չվերաբերվել» Հայոց ցեղասպանության օրինագծի քվեարկությանն ԱՄՆ Կոնգրեսում: Ըստ հրապարակման, Թուրքիան պետք է դրան վերաբերվի որպես «արեւմտյան ժողովրդավարության օրինակներից մեկին»: «Վաշինգտոն փոստի» մեկնաբանը ցեղասպանության բանաձեւը համեմատում է Իրաքի առնչությամբ կոնգրեսականների կայացրած վճռին, որն, ըստ էության, որեւէ ազդեցություն չունեցավ:

Մարդու իրավունքների պաշտպանության վիճակը Հայաստանում գնահատվում է անբավարար

ԱՄՆ պետդեպարտամենտը հրապարակել է 2007 թ.-ին աշխարհում մարդու իրավունքների պաշտպանության հերթական զեկույցը, որում, ըստ «Ազատության» կայքէջի, Հայաստանին վերաբերող հատվածում նշված է. «Իշխանությունների կողմից մարդու իրավունքների պաշտպանության ցուցանիշը ցածր է»: Պետդեպարտամենտը փաստել է սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի եւ 2003 թ. նախագահական ու խորհրդարանական ընտրությունների լուրջ խախտումների մասին: Ըստ զեկույցի, Հայաստանում քաղաքացիներն ի զորու չեն փոխել իշխանությունը, վերջինս էլ իրականացրել է ապօրինի ձերբակալություններ, նաեւ սահմանափակել է քաղաքացիների մասնավոր կյանքի, մամուլի եւ ժողովների ազատությունը: Ինչ վերաբերում է մամուլին, ապա զեկույցի համաձայն, լրագրողները Հայաստանում կիրառում են ինքնագրաքննություն, իշխանությունները եւ օրենքները սահմանափակում են կրոնական ազատությունները:

Այնուամենայնիվ, ԱՄՆ պետդեպարտամենտի մոտեցմամբ, Հայաստանում գրանցվել է որոշակի առաջընթաց, դատական իշխանությունների անկախության որոշակի աճ է գրանցվել, քաղաքացիներն ստացել են Սահմանադրական դատարան դիմելու իրավունք: Թաֆիկինգի որոշ կազմակերպիչներ կանգնել են դատարանի առջեւ: Բանակի առնչությամբ իրավիճակը մտահոգիչ է, քաղաքական բանտարկյալների եւ ձերբակալվածների առնչությամբ հիշատակվում է «Ժամանակ Երեւան» թերթի խմբագրի ձերբակալումը: Այսքան բացասականից հետո, թերեւս հայկական մոտեցմամբ, «հուսադրող» է, որ մեր հարեւաններն էլ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում հուսադրող տվյալներ չունեն, եւ ոչ միայն մեր հարեւաններն, այլեւ ողջ խորհրդային երկրները: Թեեւ խոսվում է իրավիճակի բարելավման մասին Վրաստանում, սակայն Հայաստանում եւ Ադրբեջանում իրավիճակը գնահատվում է անբավարար:

Ա. Հ.

Վրաստանին եւ Ուկրաինային ՆԱՏՕ մուտքի ամերիկյան աջակցություն

ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատը, ինչպես նաեւ Սենատի արտաքին գործերի հանձնաժողովը հավանություն են տվել ՆԱՏՕ Վրաստանի եւ Ուկրաինայի անդամակցության աջակցության նախագծին: Ըստ այդմ, Միացյալ Նահանգների պետբյուջեից միջոցներ կտրամադրվեն այդ երկրներին՝ անդամակցության նախապատրաստման համար: Բացի Ուկրաինայից ու Վրաստանից, Մ. Նահանգներն աջակցություն են հայտնել նաեւ Ալբանիային, Խորվաթիային եւ Մակեդոնիային:

Մելգոնյան վարժարան

Շենքերի պահպանության վերաբերյալ Կիպրոսի կառավարության նոր կարգադրությունը

Կիպրոսի Մելգոնյան կրթական հաստատության սանուց (շրջանավարտների) միությունը տեղեկացնում է Նիկոսիայից ստացված հաղորդագրությամբ, որ ներքին գործերի նախարար Նեոկլիս Սիլիկիոտիսը շենքերի պահպանության նոր կարգադրություն է ստորագրել, որով ընդմիշտ (անորոշ ժամանակով) կարելի կլինի խոչընդոտել Մելգոնյան վարժարանի տարածքի վաճառքը: Կարգադրությունը տպագրվել է Republic of Cyprus Official Gazette-ի (Կիպրոսի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր մարտի 2-ի համարում (N 4187-ի III (I) բաժնում) եւ ուժի մեջ է մտել հրապարակման պահից: Այստեղ ոչ որ չի կարող վնաս հասցնել 1925 թվին կառուցված Մելգոնյանի հին շենքերին կամ նույնիսկ ծառ կտրել Լիմասոլի պողոտայի երկայնքով ձգվող պուրակից, որի հիմքը դրել են Կիպրոսում ապաստանած ցեղասպանության զոհ գնացած հայերի որբացած զավակները:

Ինչպես փետրվարի 20-ի «Ազգում» նշել էինք, նոր տարվա նախօրեին Կիպրոսի գերագույն դատարանը մերժել էր օրինական համարել Մելգոնյան վարժարանի օտարումը արգելակող առաջին ատյանի վճիռը, հնարավորություն ընձեռելով ՀԲԸ Միությանը վաճառել հողատարածքը: Փետրվարի 16-ին «Սայփրըս ուիֆլի» անգլիալեզու շաբաթաթերթը (խմբագրական կազմի անդամ եւ հրատարակիչ Ջորջ Տեր-Բարթող) տեղեկացնում էր, որ խորհրդարանի հայ պատգամավորը, համայնքի հոգեւոր հովիվ Վարուժան արք. Հերգելյանն ու հասարակական եւ քաղաքական խմբավորումների ներկայացուցիչները կառավարությանը կոչ են արել միջամտել եւ փրկել վարժարանի տարածքը: Սանուց միության խոսնակ Մասիս Տեր-Բարթողն այդ առթիվ մասնավորապես ասել էր. «Այժմ, երբ առավել հրատապ է դարձել լիբանանահայ եւ Իրաքից փախչող հայ երիտասարդներին աղաստանի եւ կրթության հնարավորություններ ընձեռելը, տնօրենությունը փակել է վարժարանը եւ չի էլ մտածում այդ մարդկանց ճակատագրի մասին»: Նոր կարգադրությամբ փաստորեն ՀԲԸՄ-ն զրկվում է տարածքը վաճառելու հնարավորությունից:

«Հիացած եմ այս լուրով, քանզի դա ցույց է տալիս Կիպրոսի Հանրապետության եւ մասնավորապես ներքին գործերի նախարարի վճռականությունն այդ հարցում, որը կարեւոր է ոչ միայն կիպրահայերի, այլեւ ամբողջ սփյուռքահայերի համար: Մելգոնյանը բոլորի համար եղել եւ մնում է պատմական մի գոհար», նշել է կիպրական խորհրդարանի ներկայացուցիչների պալատի հայազգի անդամ Վարդես Մահսեյանը:

Մելգոնյանի սանուց միությունը, որ մոտ երեք տարի համառ պայքար էր մղում հասնելու գոհացուցիչ արդյունքի, գովասանքի խոսքեր է ուղղել կառավարության քաղաքաշինության բաժնի այն բոլոր աշխատողների հասցեին, ովքեր ջանք չեն խնայել հասնելու նման եզրակացության: Նրանք նաեւ արդարացի են համարել հրամանի այն տողերը, որոնցով այդ տարածքը «իր կառույցներով եւ բնական միջավայրով մաս է կազմում Նիկոսիայի քաղաքաշինության պատմական եւ ավանդական ավելի մեծ մի համակարգի, որը պետք է պաշտպանվի»:

Նոր կարգադրությամբ համայնքում վերակենդանացել են հույսերը, որ մի օր Մելգոնյանը դարձյալ կբացի իր դռները:

Սանուց միությունը, ըստ մեր հաստակ թղթակցի հաղորդագրության, հատուկ շնորհակալություն է հղել խորհրդարանական Մահսեյանին եւ նախարար Սիլիկիոտիսին:

ՀԲԸՄ-ն, ըստ երեւույթին, վիրավորված զգալով իրեն, «Սայփրըս ուիֆլիին» ուղարկած հայտարարությամբ իր տարակարծությունն է արտահայտել թերթում հրատարակված սխալ եւ զրպարտչական խոսքերի հանդեպ նշելով, որ ՀԲԸ Միությունը միշտ առաջին շարքերում է եղել օգնելու Լիբանանի, Իրաքի եւ մյուս երկրների հայկական համայնքներին: «ՀԲԸՄ-ն շարունակելու է պարտավորված զգալ նաեւ կիպրական հայ համայնքի եւ կիպրական հանրապետության կրթական, մշակութային եւ կրոնական ծրագրերին, ինչպես նաեւ այն բոլոր ծրագրերին, որոնք ամրապնդում են պատմական երախտագիտության այն կապը, որն առկա է հայ եւ հույն ժողովուրդների միջեւ», ասված է այդ հայտարարության մեջ:

Հ. Ծ.

Գազի սակագինն էլի կարելի է իջեցնել

Կորուստները որպես միջոց

Գազալիցքավորման կետերում, սովորաբար, մշտապես սուր, տհաճ հոտ է կանգնած լինում, հատկապես գազի լցման ու անջատումների ժամանակ: Սպառողները դրան սովորել են, հին տեխնիկա է, այդպես էլ պիտի լինի: Սակայն պայթյուններ ու դժբախտ պատահարներ առաջացնելու հավանականությունից զատ այս փաստն ավելի լուրջ, անմիջականորեն անընկալելի, եւ այդ պատճառով, թերեւս, ավելի վտանգավոր բացասական ներգործության աղբյուր է:

Պաշտոնական տվյալներով ամեն տարի գազաբախման համակարգում 100 մլն խ/մ -ից ավելի գազի կորուստներ են լինում, այսինքն՝ այդքան մեթան է արտանետվում մթնոլորտ: Դա բնական է, եթե նկատի ենք առնում, որ գազաբախման տեխնոլոգիաներն ամբողջությամբ չէ, որ նորացված են: Մեթանը թեեւ թունավորման բարձր մակարդակ չունի, բայց ջերմոցային էֆեկտ առաջացնելու առումով նրա ներգործության ուժը 21 անգամ ավելի բարձր է ածխաթթու գազից: Հիշեցնենք, որ ջերմոցային էֆեկտն առաջանում է արդյունաբերական թափոնների, գլխավորապես ածխաթթու գազի արտանետումներից (նրա պարունակությունը 30 տոկոսով ավելացել է մթնոլորտում), եւ ողջ մոլորակով մեկ կլիմայի աղետալի փոփոխությունները դրանց ազդեցության հետեւանքն են:

Անցած տարվա ցուցանիշներով Հայաստանում սպառված գազի մոտ 7 տոկոսը մտել է կորուստների մեջ: Դա բավական մեծ քանակ է, որի կրճատումը կարող է նաեւ սոցիալական լուրջ նշանակություն ունենալ: Չէ՞ որ այդ քանակը նույնպես մտնում է սակագնի մեջ եւ վճարվում է սպառողի գրպանից: Բայց սրանից ավելի մեծ փոխհատուցումը մաքուր օդի պահպանումը կլինի:

Կիոտոյի արձանագրությունը ճապոնացիները մեր երկրում իրականացնում են Նուբարաշենի աղբավայրի կառուցումով, որի շնորհիվ կկասեցվեն մեթանի արտանետումները մթնոլորտ: Եթե նախագիծն իրականացվի, նախատեսվում է 16 տարվա ընթացքում 100 հազար տոննայով կրճատել մեթանի արտանետումները:

ՀՀ բնապահպանության նախարարության շրջակա միջավայրի վարչության պետ **Արամ Գաբրիելյանն** առաջարկում է Կիոտոյի արձանագրության առաջարկած մաքուր զարգացման տեխնոլոգիաները կիրառել գազամատակարարման ոլորտում եւս, որ կարող է շահավետ լինել ոչ միայն գործը ձեռնարկողի, այլեւ սովորական գազ սպառողի համար: Եվ որպեսզի, ինչպես Նուբարաշենի աղբավայրում, այստեղ էլ մեթանը կլանվի նախքան օդ դուրս գալը, եւ՝ ներդրումներ են պետք, եւ՝ բնապահպանների ու Հայրենագազարդի համատեղ աշխատանքը: Սա համագործակցության նոր եւ միանգամայն արդյունավետ ատաղձ կլինի ոչ միայն նրանց երկուսի, այլեւ չափազանց շահավետ, ամենից առաջ սպառողի գրպանի ու առողջության համար:

Այս մասին առաջիկայում 2 կողմերի մասնակցությամբ լայն քննարկում է լինելու:

Իսկ ընդհանրապես Կիոտոյի մաքուր զարգացման տրամաբանությունը պիտի յուրացնեն բոլոր գործարարները, հատկապես նրանք, ովքեր զբաղվում են կամ մտադիր են զբաղվել վերականգնվող էներգետիկայի ձեռնարկություններով, օրինակ, հէկերով:

Համաշխարհային էկոլոգիական մտակոյթի մեջ բնապահպանական նման խնդիրներ առաջադրելիս կիրառվում է խրախուսումների մեխանիզմը, ինչպես օրինակ, Կիոտոյի արձանագրության դեպքում ներդրումների ու բիզնեսի հնարավորություն ընձեռելը: Նուբարաշենի նախագծի արժեքն, օրինակ, 8 մլն ԱՄՆ դոլար է: Հայաստանում էկոլոգիական հարցեր լուծելու այս ընթացքը դեռ չկա, կիրառվում է հակառակ՝ ֆինանսական սանկցիաների մեխանիզմը, օրինակ, վարչական իրավախախտումների օրենքով այս կամ այն չափի տուգանքների սահմանումը, եթե էկոլոգիական բնույթի որեւէ իրավախախտում ես արել:

Էկոլոգիական ավելի արակտիկ գիտակցություն առաջացնելու հարցում, Արամ Գաբրիելյանի համոզմամբ, շարունակում է խոչընդոտ մնալ կադրերի բացակայությունը: «Մենք կադրեր ունենք, տաղանդավոր երիտասարդներ շատ կան, սակայն նրանք հրաշալի ֆիզիկոսներ, քիմիկոսներ ու կենսաբաններ են՝ միայն տեսություններին հրաշալի տիրապետելու առումով: Բոլորը կտրված են իրական կյանքից, կիրառական մասը չի ուսուցանվում, եւ երբ մեզ պետք են լինում այս կամ այն, մի քիչ նեղացված ոլորտի մասնագետներ, նրանք չկան: Երիտասարդները չեն տիրապետում տարրական մենեջմենթի կանոններին»:

Կարծում ենք, որ արդեն 15 տարի բարեփոխումներ իրականացնող կրթական համակարգը փորձարարություններ պիտի սկսեր հենց այստեղից, մոտեցնելով իրականությունն ու գիտությունը: Իրականում հենց դա է պատճառներից մեկը, որ շատ խնդիրների լուծում, ինչպիսիք նաեւ բնապահպանականն են, տարիներ հռետորական հարցադրումների շրջանակից դուրս չեն գալիս: Քանի որ, ով ուզում, զբաղվում է դրանցով:

ԿԱԲԻՆԵ ՂԱՆԲԵԼՅԱՆ

ԷՔՍԿԱՎԱՏՈՒՄ ՄԻ ՔԱՆԻ ԱՄՍԻՑ

Ինտերնետ մատակարարների համար էապես կնվազի պետական տուրքը

Հայաստանում ինտերնետային կապի տարածումը խթանելու նպատակով կառավարությունը երեկ առաջարկել է փոփոխություն կատարել «Պետական տուրքի մասին» օրենքում: Ինչպես հայտնեց առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի պետ **Ժենյա Ազիզյանը**, վարչապետին կից տեղեկատվական տեխնոլոգիաների խորհուրդը այս ոլորտի զարգացման խոչընդոտները հայտնաբերելու հանձնարարական էր տվել, որի արդյունքում էլ առաջարկվել էր վերոնշյալ փոփոխությունը: Համաձայն այդ փոփոխության, էապես նվազեցվում է էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շահագործման համար գանձվող պետական տուրքի չափը:

Երեւանում եւ միաժամանակ մեկ կամ մի քանի մարզերում ինտերնետ մատակարարողները ներկայումս սահմանված տարեկան 3 մլն դրամի փոխարեն առաջարկվող օրենսդրական փոփոխությամբ էլեկտրոնային ցանցի շահագործման համար պետք է վճարեն 500 հազար դրամ:

Միայն Երեւանում ինտերնետ մատակարարողները տարեկան 2 մլն դրամի փոխարեն կվճարեն 300 հազար դրամ: Միայն մեկ մարզում (առանց Երեւանը ներառելու) գործող ինտերնետ պրովայդերները (մատակարարները) ներկայիս 500 հազար դրամի փոխարեն տարեկան կվճարեն ընդամենը 100 հազար դրամ:

Ժենյա Ազիզյանի հավաստմամբ, այս փոփոխություններն արվել են՝ հաշվի առնելով նաեւ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունների մոտեցումները եւ նպատակ ունեն խրախուսելու ինտերնետի տարածումը Հայաստանում, էլեկտրոնային հասարակության կայացումը եւ փոքր ու միջին բիզնեսի զարգացումը:

Անկասկած է, որ ինտերնետի տարածման առումով վերոնշյալ փոփոխություններն իսկապես լավ հնարավորություններ են ստեղծում Հայաստանում ինտերնետի տարածման համար: Սակայն կառավարության առաջարկած այս փոփոխությունները, ցավոք, շուտով կյանքի չեն կոչվի: Մինչ ձեւավորվի Ազգային Ժողովի նոր կազմը եւ կանդրադառնա այս օրինագծին, առնվազն ամիսներ կտեւի:

Ա. Մ.

«Հովանոցային գովազդը» կարգելվի

Կառավարությունը երեկ հավանություն է տվել «Գովազդի մասին» օրենքում առաջարկվող այն փոփոխությանը, ըստ որի կարգելվի այսպես կոչված «հովանոցային գովազդը»: Դա այն գովազդն է, «որում գովազդվող ապրանքներն ու ծառայությունների համար օգտագործվող ապրանքային նշանը կամ ֆիրմային անվանումը նույնական են կամ շփոթելու աստիճանի նման են այն ապրանքների եւ ծառայությունների ապրանքային նշանին կամ դրանք արտադրող, առաջարկող իրավաբանական անձանց ֆիրմային անվանմանը, որոնց նկատմամբ գործող օրենքը սահմանափակումներ է նախատեսում»: Ամենայն հավանականությամբ, այս փոփոխությունն առնչվում է այն դեպքերին, երբ գովազդվող ընկերության եւ նրա արտադրած, ենթադրենք, օղու անվանումները նույնն են կամ նման են, ինչի շնորհիվ, չնայած օրենքի արգելքին, օղիների գովազդը հեռուստատեսությամբ անշեղորեն շարունակվում է:

Դժվար է ենթադրել, թե այս փոփոխությունը գործնականում կիրագործվի, թե՞ դարձյալ շրջանցելու հնարավորություն կլինի: Համենայն դեպս, կառավարությունն առաջարկել է «Գովազդի մասին» օրենքի կիրառումը վերահսկելու նպատակով հստակ սահմանել վերահսկողություն իրականացնող մարմինը:

Ա. Մ.

ԱՄՆ-ը Սադոյանին «գցո՞ւմ է»

«Դեռ փետրվարի 24-ին դիմել էինք տարբեր երկրների եւ կազմակերպությունների, նույնիսկ նախահաշիվ էինք ներկայացրել 800-900 հազար դոլարի կարգի գումարների ստացման եւ ծախսման համար», երեկ լրագրողներին հիշեցրեց ԱԺԿ նախագահ Ա. Սադոյանը: Նպատակն այն էր, որ գումարի մի մասի շնորհիվ հանրապետական սփոռում ունեցող որեւէ հեռուստաալիքով տրամադրվեր ամենօրյա մեկժամյա եթեր քարոզարշավի համար: Պետք է ստեղծվեր հոգաբարձուների խորհուրդ, որը կբաժաներ ժամերը փիչ հնարավորություն ունեցող քաղաքական ուժերի միջեւ, նաեւ կլուսաբաներ ազատ, արդար ընտրությունների կարեւորությունը: «Մենք այն ժամանակ տասնօրյա ժամկետ էինք տվել արձագանքի համար», ասաց բանախոսը: Ա. Սադոյանը մասնակի արձագանք որակեց բացասական պատասխանով Հայաստանում ԱՄՆ դեսպանատնից ստացված, փաստորեն միակ գրությունը: Բացի այդ, Ա. Սադոյանն ասաց, որ նախկին դեսպան Ջ. Էվանսի հետ խոսել են իր առաջարկների մասին: Ըստ Ա. Սադոյանի, ամենայն հավանականությամբ նախկին դեսպանը ԱՄՆ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսին չի տեղեկացրել այդ հանդիպման մասին:

Ինչպես տեսնում ենք, Ա. Սադոյանի հույսերն ու նախահաշիվը փաստորեն անտեսել են շատ կազմակերպություններ, նաեւ ԱՄՆ-ն, որի պատճառով էլ Ա. Սադոյանը պետք է առաջարկել գործնական քայլեր ձեռնարկի. «Մենք որոշել ենք անմիջականորեն դիմել Կոնդոլիզա Ռայսին, ասելու, որ երեւի Ձեր առաջարկության մասին տեղյակ չէ Հայաստանում ԱՄՆ-ի դեսպանի պաշտոնակատարը, որ Ձեր

առաջարկությունը գործողության մեջ չի դնում»: «Եթե Կ. Ռայսը որոշակի ժամկետների մեջ չպատասխանի, ապա մենք դիմելու ենք ճանաչված միջազգային տեղեկատվական միջոցներին, ենթադրենք «Նյու Յորք թայմսին» կամ CNN հեռուստատեսությանը: Ինչ-որ անհասկանալի խաղեր են կատարվում, ԱՄՆ պետքարտուղարը հայտարարում է, որ «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրի 236 մլն դոլարը կապում են ազատ, արդար ընտրությունների հետ, հայտարարում են, որ բացի այդ 236 մլն դոլարից լրացուցիչ 6,5 մլն դոլար էլ են տալու ազատ արդար ընտրություններ անցկացնելու համար, մյուս կողմից, երբ նույն նպատակով առաջարկ է ներկայացվում, պատասխան չի լինում, ձգձգվում է կամ անտեսվում»:

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տախտու վարորդին խեղդամահ են արել

«Պրահա» ՍՊԸ-ին պատկանող տախտի ծառայության վարորդ, 1972 թ. ծնվ. Արտյոմ Կարապետյանը նախորդ օրը ժամը 21-ի սահմաններում, ծառայության դիսպետչերին ռադիոկապով հայտնել է, որ Հանրապետության հրապարակից ուղեւորներ է տեղափոխում Արմավիրի մարզ: Դրանից հետո վարորդը իրեն ամրակցված «ՎԱԶ-2107» ավտոմեքենայով անհետ կորել է: Մարտի 6-ին ոստիկանության Վաղարշապատի բաժնում քաղաքացիներից ահազանգ է ստացվել, որ Արմավիր-Էջմիածին ճանապարհին՝ Սամադար գյուղի հատվածում, տղամարդու դիակ կա: Նշված վայրում հայտնաբերվել է Արտյոմ Կարապետյանի դիակը: Նույն օրը, ըստ դատաբժշկական փորձաքննության եզրակացության, Ա. Կարապետյանը մահացել է բռնի մահվան, մեխանիկական շնչահեղձության եւ պարանոցի օրգանների սեղմման հետեւանքով: Փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ: Քննությունը վարում է Արմավիրի մարզի դատախազությունը:

Մ. Մ.

«ՄԱՄՍ-ՌՈՅԱ»

«Մանե» հյուրանոց-ռեստորանը մարմնավաճառների որջ

Կարծես թե սայլը տեղից շարժվում է, ու կամաց-կամաց բացահայտվում են գիշերային զվարճանքի վայրերում, հյուրանոցներում, բարերում եւ ռեստորաններում գործող մարմնավաճառների որջերը: Թեեւ դեռ կրիայի քայլերով, բայց գոնե շարժ կա... Երեկ ՀՀ գլխավոր դատախազության քննչական վարչության աշխատակիցներն ավարտել են Տ. Վորոժցովայի՝ երկու կանանց (Ա. Մ.-ը եւ Ա. Ղ.-ը) պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու դեպքերի առթիվ հարուցած քրեական գործի նախաքննությունը եւ քրեական գործն ուղարկվել է Լոռու մարզի առաջին ատյանի դատարան:

Նշենք, որ նախաքննությամբ պարզվել եւ հիմնավորվել է, որ ՀՀ քաղաքացի Տ. Վորոժցովան, հանդիսանալով անհատ ձեռնարկատեր, 2006 թ. մայիսի 3-ին կնքված պայմանագրով անշարժ գույքի անհատույց օգտագործման նպատակով ընդունել է Լոռու մարզի Փամբակ գյուղի տարածքում գտնվող «Մանե» հյուրանոց-ռեստորանը: Եկամուտն ապահովելու եւ հաճախորդներ չկորցնելու նպատակով Տ. Վորոժցովան երբեմն հյուրասենյակներ է հատկացրել ռեստորան այցելած հաճախորդներին, նրանց հետ կամ իր կանչով ռեստորան եկած մարմնավաճառ աղջիկներին, պայմաններ ստեղծել վերջիններիս պոռնկությամբ զբաղվելու համար: Ձեռք բերված ապացույցների հիման վրա Տ. Վորոժցովային մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի 1-ին մասով:

Մ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ժե տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Լրագրողների սենյակ / հեռ 581841
Հաճախորդ. ծառայություն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայություն / հեռ 529353
Հաճախորդային բաժանմունք
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

www.azg.am www.azgdaily.com www.azgdaily.eu

ԱԶԳ

Ընթացիկ

ՄԱՐՏԻ 8-Ի ԽՈՀԵՐ

Ի՞նչ ռեսուրս է կորչում

Ես միշտ կողովս բաց եմ թողել մարտի 8-ը: Ինձ թվացել է, որ այդ տոնը ստեղծված է ոչ թե կանանց, այլ տղամարդկանց համար որպես մեղքերի քավության, ցուցադրական ուշադրության եւ այդ մի օրից բացի՝ մյուս օրերին իրենց «սոտերմեն» զգալու անցաքուդ: Մի խոսքով՝ այս տոնը զիջողության նման մի բան է թվում ինձ, տեղեկանք տղամարդու ձեռքին, որ մյուս օրերին կինը շաս «չթպրտա»: Մյուս կողմից էլ՝ այդ օրը կարծես հիշեցնում է, որ կինը թույլ սեռի ներկայացուցիչ է, մի տեսակ խփում է կանանց եւ տղամարդկանց հավասարության գաղափարին, վկայում, որ այդ հավասարությունը միֆ է, օճառի պղպջակ, գոյություն չունեցող բան, ու պարզապես միջազգային համաձայնագրերի, մարդու իրավունքների պաշտպանությունն ամբագրող զանազան հռչակագրերի անհրաժեշտ բաղկացուցիչ է:

Հիմա կասեք՝ չափազանցում եմ, կամ ցինիզմի ավելորդ դոզա ունեմ: Բայց ես էլ կպատասխանեմ՝ մի լավ հայացք նետեք մեր իրականությանը. այն իրականությանը, որ մարտի առաջին օրերից տիրում է խանութներում եւ ծաղկի սրահներում, երբ հայերիս մեծ մասը մրցակցության մեջ է՝ մի ճոխ նվեր գնելու իր կյանքը թաղցրացնող իգական սեռի ներկայացուցիչների համար: Ու այդտեղ էլ հայերիս մաքսիմալիզմի պակասը չի զգացվում: Մինչդեռ այդ նույն նվեր առնողները, ցուցադրական մեծարողները, իրենց ժամանակակից ձեւացնող արական սեռի հանրությունը խոժոռում են հոնքերը, երբ կինն ուզում է ինքնառեալիզացվել, գտնել իրեն բիզնեսում կամ ստեղծագործության մեջ: «Քո ինչ բան ու գործն ա, տուն-էրեխա, մարդ-բան չունես՝ գնա զբաղվի», լսվում է հաճախ միջին ասիացու հոգեկերտվածքին համապատասխան սովորական խրատաբանությունը: Պնդաճակատին, հասարակական կարծիքին դեմ գնացողին մեր տղամարդիկ անուն են կոչնում, երբեք իրենց պարտքը չեն համարում կնոջ կայացմանը նպաստելը, նրա մեջ եղած տաղանդները խրախուսելը: Կինը հայոց մեջ շարունակում է դիտվել իբրեւ ընտանիքի գլխավորի կցորդ, բայց այնպիսի մի կցորդ, որն իր ուսերի վրա տանում է ողջ կենցաղային հոգսի ծանրությունը, անում է համարյա անհնարինը, «չլվում» արական սեռից մի քանի անգամ ավելի, իր ողջ հնարամտությունը ծախսում՝ ընտանիքին կուշտ, հագնված ու բարեկեցիկ պահելու համար, ու դրա համար նրան օձի խելք է հարկավոր լինում, սակայն, հասկանում եք, հարկ է, որ մեր տղամարդիկ շարունակեն երեւալ ամենա-ամենան: Ու այդ կերպարը պահպանում է հենց հայ կինը՝ այդպիսին է հայոց ավանդական ստերեոտիպը հայոց ընտանիքի եւ հայ արական իդեալի վերաբերյալ:

Այս մտայնությունը իր մութ-լույս կողմերն ունի: Մի կողմից լավ է, ընտանիքն, այդպիսով, հայոց մեջ շարունակում է պահպանել իր դրական դերակատարումը, արական սկիզբը շարունակում է գերադաս ու բարձր աստիճանի վրա մնալ հայ հասարակության մեջ: Սակայն... ինչ ռեսուրս է կորչում, որ ուրիշ ազգեր չունեն՝ հայ կնոջ համբերատարության, հնարամտության, ձեռքի հունարի, ոչնչից ամեն ինչ ստեղծելու, գեղեցիկն ու գեղագիտականն իր ողջ խորքով զգալու ամբողջությունը, որը եւ բիզնեսում, եւ արվեստում կարող է բարձունքների բերել, եթե ծավալման տարածք ունենա, եթե պահանջարկված լինի հասարակության մեջ:

Ու այդպես էլ արդում ենք: Հայոց պատշտոնների 90 տոկոսում մեր այրերն են, հայոց օրենսդիրներն անպայման արական սեռի պետք է լինեն, հայոց գործարարները խեղճացնում են հայոց գործարարուհիներին, հայոց գրողների, բանաստեղծների, նկարիչների, գիտնականների, խմբագիրների ու այլ կարեւոր սուբյեկտների տղամարդն է լավ: Իսկ կանանց մնում է սեւ աշխատանքը եւ սեփական տղամարդկանց պարզապես անելը:

Իսկ գենդերային հավասարության մասին զանազան սեմինարներն ու դասախոսությունները նույնպես հիմնականում հասարակական կազմակերպություն աշխատեցնող տղամարդկանց՝ ընտանիք պահելու ընդհանուր տրամաբանությունից են բխում ու մնում խոսքուզբույցի մակարդակի, որպես միջազգային հանրության աչքին թոզ փչոցի:

Սակայն չսվերենք տոնը մեր այս դատողություններով: Գուցե մեր կանանց մի զգալի հատվածի սրտին այլ բան է ասում, մղում մի հավելյալ անգամ եւս կին զգալու ու շրջապատված լինելու արական սեռի ուշադրության ու սիրո տոնական դրսեւորմամբ: Չզրկենք նրան այդ զգացողությունից:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ



ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ ԵՆ ԸՆԴԴԻՄԱԴԻՐՆԵՐԸ

Գոնե հիմա ձեռնպահ մնանք միմյանց վրա ցեխ շպրտելուց

Երեկ «Ուրբաթ» ակումբի հյուրերը ՀԺԿ վարչության քարտուղար **Գրիգոր Հարությունյանն** ու ՀԺԿ համամասնական ցուցակով խորհրդարանական ընտրությունների մասնակից **Ալբերտ Բազեյանն** էին:

Գրիգոր Հարությունյանը, բնականաբար, նախ հարկադրված էր պարզաբանել կուսակցության Կոտայքի կառույցի շուրջը պտտվող լուրերն ու իրադարձությունները Սմբատ Եղիազարյանի բարձրացրած աղմուկից հետո: Այդ ամենի իրական պատճառն այն է, որ Սմբատ Եղիազարյանը խիստ դժգոհ է եղել համամասնական ցուցակում իրեն հատկացված 8-րդ տեղից՝ հույս ունենալով հնգյակի մեջ տեղ գրավել: Կառույցն իր տեղում է, չի քանդվել, իսկ Սմբատ Եղիազարյանն, ընդամենը ՀԺԿ-ից մյուս հեռացածների նման շահարկում է Կարեն Դեմիրճյանի անունը, թե իբր կուսակցությունը շեղվել է նրա գաղափարներից ու նախանշած ուղուց:

Գրիգոր Հարությունյանը հերյուրանքներ է համարում նաեւ խոսակցությունները, թե իրենք համագործակցում են իշխանությունների հետ: Եթե այդպես է, ինչո՞ւ են իրենց միանալու ցանկություն հայտնել մյուս կուսակցությունները: Հերյուրանք է նաեւ, թե միասնական ընդդիմադիր դաշինքի ստեղծմանն իրենք են խանգարել: «Մենք կողմ ենք դաշինքի պահպանմանը, ի՞նչն է փոխվել 2003 թվականից հետո, որ չեն ուզում նույն սկզբունքով դաշինք կազմել», հարցնում է Գրիգոր Հարությունյանն ու ինքն էլ բացատրում տարբերությունը: Խորհրդարանական ընտրություններին անմիջապես հետեւելու են նախագահական ընտրությունները, եւ ընդդիմադիր կուսակցությունները մի դաշինքում միավորվելու դեպքում, հետո, բնականաբար, նախագահի մեկ թեկնածու ներկայացնելու խնդրի առաջ պիտի կանգնեին, բայց այդ հեռանկարին ոչ մի կուսակցություն չդիմացավ:

Ալբերտ Բազեյանը կարծում է, որ ընդդիմադիրները բավական ժամանակ ունեին իրավիճակը ճիշտ գնահատելու եւ համախմբվելու համար, բայց նրանք դա չարեցին, որովհետեւ զբաղված էին միմյանց վարկաբեկելով: Եվ միանգամայն բնական էր, որ վերջին պահին չհաջողվեց իրականացնել համախմբումը: Ալբերտ Բազեյանը ընդդիմադիրներին կոչ է անում գոնե հիմա ձեռնպահ մնալ միմյանց վրա ցեխ շպրտելուց, որպեսզի ընտրությունները վերահսկելու համար համակարգող խորհուրդ ստեղծելու գաղափարն էլ չտապալվի:

Հիմա ընտրություններին մասնակցում են ընդդիմադիր ուժերից նրանք, ովքեր ընդամենը 5 տոկոս նվաճելու հույս ունեն, իսկ ովքեր հուսահատ են, իրենց կողքի քաշվելը արդարացնում են, թե իբր բոյկոտ են անում: Ալբերտ Բազեյանի գլխավորած «Ազգային վերածնունդ» կուսակցությունը ընտրություններին չի մասնակցում ֆինանսական բավարար ռեսուրսների բացակայության պատճառով, նաեւ, որպեսզի իշխանական կուսակցություններին հնարավորություն չտա, որ կտոր-կտոր, մասնատված կուսակցությունների հաշվին մի բան էլ ավելացնեն իրենց քվեները: Իր՝ ՀԺԿ-ի համամասնական ցուցակում ընդգրկվելու նպատակը նաեւ կուսակիցներին քաղաքական գործընթացներից, թեկուզ՝ կարճ ժամանակով, չհեռացնելն է:

«Ազգային վերածնունդի» նախագահը խիստ դառնացած է իր անձի եւ կուսակցության շուրջը մամուլում շրջանառվող բամբասանքներից: Օրինակ, այն, թե՝ ինքն իբր «Սերժ Սարգսյանի դրած փաթեթն է ՀԺԿ-ում»: Նա հայտարարում է, որ արդեն 7 տարի չի առնչվել Սերժ Սարգսյանի հետ, եւ «Սերժ Սարգսյանը չէ, ով ուզում է լինի, չի կարող հրահանգներ տալ» իրեն: «Եթե շարունակվեն շահարկումները, անբարոյական որակումները, եթե մամուլում տիրող մթնոլորտը չփոխվի, կուսակցության խորհուրդը կվերանայի իր դիրքորոշումը՝ արժե՞ ընդհանրապես մասնակցել այս ընտրություններին, թե՞ ոչ»: Բազեյանը կարող է հանել իր թեկնածությունը համամասնական ցուցակից, եթե կուսակցությունն այդպիսի որոշում ընդունի:

ԿԱՐԵՆ ՊԱՊԻՆՅԱՆ

Մարտի 9-ից *«Ազգի»* կայքէջի հյուրը Ալբերտ Բազեյանն է

Մարտի 9-ից մեր կայքէջի հյուրը «Ազգային վերածնունդ» կուսակցության նախագահ Ալբերտ Բազեյանն է: Ձեր հարցերը նրան կարող եք ուղղել մինչեւ մյուս հինգշաբթի՝ մարտի 16-ը:

Մենատում հեռաձգվեց Դինքի սպանությունը դատապարտող բանաձեւի քվեարկությունը

1-ին էջից

Բանաձեւը պատշտպանող դեմոկրատ սենատորները քվեարկության հեռաձգումը համարել են անփառունակ մոտեցում, իսկ Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի գործադիր տնօրեն Արամ Համբարյանը՝ անհարգալից վերաբերմունք Հրանտ Դինքի հիշատակին: Նշելով այդ մասին, CNN-Turk-ը նշում է նաեւ այն հիասթափությունը, որն ԱՄՆ-ի հայկական կառույցներին պատճառել է բանաձեւի քվեարկության հետաձգումը:

Անհպատաս մեծ կլինի այդ նույն կառույցների հիասթափությունը, եթե քննարկումից հետո հետաձգվի նաեւ ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատին ներկայացված Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձեւը: Իսկ քվեարկության հետաձգումը 2008 թ.-ին ամենեւին չի բացառվում, որքան էլ բանաձեւը պատշտպանի Ներկայացուցիչների պալատի խոսնակ Նենսի Փելոսին կամ Հրանտ Դինքի սպանությունը դատապարտող բանաձեւի հեղինակ Ջո Բայդենը գլխավորի Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը, որն իր թեկնածությունն է առաջադրելու ԱՄՆ նախագահական առաջիկա ընտրություններում:

Ինչո՞ւ: Այն պարզ պատճառով, որ ցեղասպանության ճանաչումն ԱՄՆ-ում ինչպես հանրապետականների, այնպես էլ դեմոկրատների համար նպատակ չէ, այլ Թուրքիայի քաղաքականությունը տարածաշրջանի վերափոխման ԱՄՆ-ի ծրագրերին ծառայեցնելու արդյունավետ միջոց: Քանի որ այդ ծրագրերին դիմադրում են վարչապետ Ռեջեպ Թայիփ Էրդողանի իսլամամետ «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության իշխանությունները, ուստի այդ բանաձեւի միջոցով փորձ է արվում ոչ այնքան Թուրքիայի վրա ազդելու, որքան թուրքական իսլամամետ իշխանություններին ուղղորդելու:

Հարցի էությունը սակայն ԱՄՆ-ի տարածաշրջանային ծրագրերով չեն սահմանափակվում: Դրանք անմիջականորեն բխում են Իսրայելի շահերից: Թերեւս այդ առումով պատահական չէ, որ Էրդողանի «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության իշխանություններին առավելագույնս քննադատում են ԱՄՆ-ի հրեական կառույցներն ու Իսրայելից ուղղորդվող «Նոր պահպանողականները», որոնք վերահսկում են պատշտնական Վաշինգտոնի գործունեությունը:

Այլ կերպ, եթե Թուրքիայում իշխանությունը փոխվի կամ Էրդողանի կառավարությունը համակերպվի տարածաշրջանում ԱՄՆ-ի՝ Իսրայելի շահերից բխող ծրագրերն ընդառաջելու մտքի հետ, ապա «Նոր պահպանողականների» եւ հրեական կառույցների քննադատությունը ինքնաբերաբար կվերածվի խրախուսանքի: Թեեւ Հայոց ցեղասպանության հարցը կպահպանի իր տեղն ԱՄՆ օրակարգում, սակայն վերջիններս այլեւս Թուրքիային չեն վախեցնի, թե մեծ է Հայոց ցեղասպանության ճանաչման հավանականությունը Կոնգրեսում:

Տարածաշրջանում պատշտնական Վաշինգտոնին Իսրայելի շահերով առաջնորդող «Նոր պահպանողականներն» ու ԱՄՆ-ի հրեական կառույցներն ամեն կերպ ձգտում են պահպանել նաեւ Հոլոքոստի բացառիկությունը: Հայոց ցեղասպանության ճանաչումն ԱՄՆ Կոնգրեսում հակասում է Հոլոքոստի բացառիկության պահպանման տրամաբանությանը: Թերեւս դա է պատճառը, որ տեսնում Հայոց ցեղասպանություն արտահայտությունը պարունակելու պատճառաբանությամբ նույնիսկ Հրանտ Դինքի սպանությունը դատապարտող բանաձեւի քվեարկությունն է հետաձգվում:

ԱՄՆ-ում հրեաների թիվը հասնում է ընդամենը 7 միլիոնի: Սակայն երկրում մեծապես նրանք են վերահսկում զանգվածային լրատվության եւ ֆինանսական միջոցները: Ավելին, ամերիկացի հրեաների մեծ մասը քվեարկում է դեմոկրատների օգտին, ինչը ենթադրում է նաեւ ֆինանսական աջակցություն: Սա նշանակում է, որ Հայոց ցեղասպանության բանաձեւի ընդունման գինը բարձր կլինի Դեմոկրատական կուսակցության համար հատկապես հրեական լոբբիի կամքին հակադրվելու պարագայում:

Չպետք է մոռանալ նաեւ Հայոց ցեղասպանության հետեւանքների վերացման մասին, որովհետեւ բանաձեւի ընդունումն ԱՄՆ-ին՝ ի տարբերություն մյուս երկրների, կկանգնեցնի դրա հետեւանքների վերացման հարցի առջեւ, որովհետեւ նա է աշխարհին ուղղություն տվող լիարժեք միակ գերտերությունը:

Այս ամենի մասին Թուրքիան, ինչ խոսք, գիտի: Հետեւաբար նրան առավելապես հուզում են Հայոց ցեղասպանության բանաձեւը ձախողելու դիմաց ներկայացվող պահանջները, ինչպես նաեւ բանաձեւի ընդունման հավանականության մասին Վաշինգտոնում արվող հայտարարությունները: Ի վերջո, որքան բարձրաձայն եւ հաճախակի են հնչում այդ կարգի հայտարարությունները, այնքան ԱՄՆ օրակարգում ամրանում է Հայոց ցեղասպանության հարցը: Դրանով ե՛ւ աճում են ցեղասպանության բանաձեւի դիմաց առաջադրվող պահանջների քանակը, ե՛ւ սպառման շեմին են կանգնում բանաձեւն ԱՄՆ օրակարգից դուրս մղելու Թուրքիայի հնարավորությունները:

Ազգային

Զգուշանալ թրքական ծուղակէն

ԵՐՈՒՆԴ ԱԶԱՏԵԱՆ

Երեւութապէս ողջունելի արարք մը կը թուի թուրք կառավարութեան մէկ նոր նախաձեռնութիւնը, սակայն պէտք է զգուշանալ անոր եւին կանգնող քաղաքական դիտաւորութենէն: Արդարեւ, կը հաղորդուի թէ Թուրքիոյ մշակոյթի եւ զբօսաշրջութեան նախարարութիւնը երկու միլիոն դոլար ծախսելով վերանորոգած է Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին, որ 10-րդ դարու հայկական հոգեւոր ժառանգութիւն մըն է, եւ որուած է յատուկ հանդիսութիւններով կատարել անոր բացումը ընթացիկ տարուան ապրիլի 15-ին:

Այս կապակցութեամբ պր. նախարարը հարցազրոյց մը ունեցած է թրքական «Զաման» թերթին հետ, կարգ մը շաս հետաքրքրական հաստատումներ կատարելով: Մշակոյթի այս նախարարը՝ պր. Աթիլլա Քոչ, այն անձն է, որ ծուղակը ձգած էր ադեռ վերջին տարիներուն Պատրիարքը իրեն չվերաբերող քաղաքական հարցերու մէջ մտնելով ջուր հայթայթած էր թրքական ջրաղացին:

Կ՚ըսուի նաեւ թէ խաչը չէ վերականգնուած եկեղեցւոյ գմբէթին վրայ եւ ոչ ալ երաշխաւորութիւն կայ, որ հոգեւորական մը իրաւունք պիտի ունենայ այդ օր աղօթելու վերանորոգուած եկեղեցւոյ մէջ:

Երբ Աղթամարը կը վերանորոգուի, անդին հարիւրաւոր- եթէ ոչ հազարաւոր- վանքեր, եկեղեցիներ, յուշարձաններ կը մնան աւերակ վիճակի մէջ: Նախարարը, իր վերոյիշեալ հարցազրոյցին մէջ, խաբկանք չի թողուր մեզի՝ հայերուս, թէ Աղթամարը մեր ազգային ժառանգութեան մաս կը կազմէ. ան խօսքը մասնաւորելով կ՚ըսէ. «Մենք կը վերանորոգենք պաշտամունքի վայրերը տարբեր դաւանանքներու՝ ըլլան անոնք միաստուածեան թէ բազմաստուածեան. մենք զանոնք կը նկատենք մեր սեփական ժառանգութիւնը: Մեր հարստութիւնը»: Բնականաբար ոչ ոք ժառանգ թողուց այդ հարստութիւնը թուրքերուն. իրենք կողոպտեցին զայն նահատակ ժողովուրդէ մը եւ այսօր արդէն զայն իրենցը կը նկատեն:

Պր. Քոչ կը տեղեկացնէ, թէ ցարդ տասը եկեղեցիներ վերանորոգած են՝ յունական եւ հայկական, երբ անդին հազարաւորներ կը մնան աւերակ վիճակի մէջ: Նորոգուած կամ նորոգուելու ընթացքի մէջ եղող եկեղեցիներն են Անի, Աղթամար, Ամասիայի Մարզուան շրջանի հայկական եկեղեցին, Տիգրան Հոնենցի եկեղեցի Կարսի շրջանին մէջ: Վերոյիշեալ թումները կատարելէ ետք նախարարը կը յայտնէ նաեւ արտառոց գաղափար մը. «Անին,-կ՚ըսէ ան,- ունի յատուկ նկարագիր մը, այնտեղ կը գտնուին ութ եկեղեցիներ եւ ութ մզկիթներ: Անոնց կառուցման թուականները զուգահեռ են իրարու: Իսլամները եւ քրիստոնեաները միեւնոյն շրջապատին մէջ երկար ատեն ապրած են խաղաղ կենակցութեամբ»: Մինչդեռ, երբ Անին կը ծաղկէր իբրեւ հազար ու մի եկեղեցիներու ուսան, թուրք չկար այնտեղ տակաւին. սելճուկ թուրքերը հասան Անի՝ անոր անկման շրջանին, զայն կործանելու համար: Իսկ այսօր հարց է, որ այնքան խաղաղօրէն կ՚ապրէին միասին, ո՞ւր կորած են հայերը:

Բացի անկէ, որ բացման թուականը որոշուած է խնդրայարոյց ժամանակի մը, ո՞վ կը ներկայացնէ հայութիւնը, ըստ թուրքերուն, մանաւանդ ո՞վ կը ներկայացնէ Սփիւռքի հայութիւնը. նախարարը յստակօրէն չի պատասխաներ այդ հարցումին. երբ կ՚ըսէ. «Մենք հրաւիրած ենք Եւրոպական միութեան պատկանող երկիրներէ ներկայացուցիչներ: Կը հրաւիրենք նաեւ մշակոյթի նախարարները Ռուսաստանի, Հայաստանի, Լիբանանի, Սուրիոյ, Վրաստանի, Միացեալ Նահանգներու եւ Կանադայի, ուր հայկական հոծ գաղութներ կան. մենք կարեւոր դէմքեր հրաւիրած ենք սփիւռքէն, հոգեւոր եւ աշխարհիկ պետեր, ինչպէս նաեւ մշակութային կազմակերպութեանց ներկայացուցիչներ: 200 յայտնի հիւրեր պիտի ընդունինք»:

Հետաքրքրական է գիտնալ, թէ որո՞նք են այդ 200 յայտնի հիւրերը:

Թրքական այս արշաւին դիմաց համեմատաբար հեծ է Հայաստանի նախագահ մը, ո՞վ կը ներկայացնէ հայութիւնը, ըստ թուրքերուն, մանաւանդ ո՞վ կը ներկայացնէ Սփիւռքի հայութիւնը. նախարարը յստակօրէն չի պատասխաներ այդ հարցումին. երբ կ՚ըսէ. «Մենք հրաւիրած ենք Եւրոպական միութեան պատկանող երկիրներէ ներկայացուցիչներ: Կը հրաւիրենք նաեւ մշակոյթի նախարարները Ռուսաստանի, Հայաստանի, Լիբանանի, Սուրիոյ, Վրաստանի, Միացեալ Նահանգներու եւ Կանադայի, ուր հայկական հոծ գաղութներ կան. մենք կարեւոր դէմքեր հրաւիրած ենք սփիւռքէն, հոգեւոր եւ աշխարհիկ պետեր, ինչպէս նաեւ մշակութային կազմակերպութեանց ներկայացուցիչներ: 200 յայտնի հիւրեր պիտի ընդունինք»:

Հետաքրքրական է գիտնալ, թէ որո՞նք են այդ 200 յայտնի հիւրերը:

Թրքական այս արշաւին դիմաց համեմատաբար հեծ է Հայաստանի փոփոխականին, թէ մնալ ձեռնպահ. մանաւանդ՝ ղեկավարներու մակարդակով խորհրդակցութիւն մը պէտք է կայացնել՝ նախքան հաւաքական որոշումի մը յանգիլը: Լուրջ սխալ մը պիտի ըլլար որեւէ հրաւէր սացողի համար Իսթամպուլ փութալէ, առանց նման խորհրդակցութեան եւ հաւաքական որոշումի մը:

Պէտք չէ թերագնահատել թուրքին խորամանկութիւնն ու դիւանագիտական ճկունութիւնը. ի վերջոյ անոնք գրեթէ հազարամեակ մը կայսրութիւն ղեկավարած եւ դիւանագիտական փորձ են ձեռք ձգած:

Ասիկա առիթ մըն է, որպէսզի սփիւռքը իր որոշումները համադրէ հայրենի պետութեան հետ:

Խորհողներ կրնան ըլլալ, որ Թուրքիոյ կառավարութեան հրաւէրը կրնայ բխած ըլլալ մերձեցման ցանկութենէ մը: Դեռ վերջերս պարզուեցաւ, որ այդպիսի յոյսեր այնքան ալ

ծեան. մենք զանոնք կը նկատենք մեր սեփական ժառանգութիւնը: Մեր հարստութիւնը»: Բնականաբար ոչ ոք ժառանգ թողուց այդ հարստութիւնը թուրքերուն. իրենք կողոպտեցին զայն նահատակ ժողովուրդէ մը եւ այսօր արդէն զայն իրենցը կը նկատեն:

Պր. Քոչ կը տեղեկացնէ, թէ ցարդ տասը եկեղեցիներ վերանորոգած են՝ յունական եւ հայկական, երբ անդին հազարաւորներ կը մնան աւերակ վիճակի մէջ: Նորոգուած կամ նորոգուելու ընթացքի մէջ եղող եկեղեցիներն են Անի, Աղթամար, Ամասիայի Մարզուան շրջանի հայկական եկեղեցին, Տիգրան Հոնենցի եկեղեցի Կարսի շրջանին մէջ: Վերոյիշեալ թումները կատարելէ ետք նախարարը կը յայտնէ նաեւ արտառոց գաղափար մը. «Անին,-կ՚ըսէ ան,- ունի յատուկ նկարագիր մը, այնտեղ կը գտնուին ութ եկեղեցիներ եւ ութ մզկիթներ: Անոնց կառուցման թուականները զուգահեռ են իրարու: Իսլամները եւ քրիստոնեաները միեւնոյն շրջապատին մէջ երկար ատեն ապրած են խաղաղ կենակցութեամբ»: Մինչդեռ, երբ Անին կը ծաղկէր իբրեւ հազար ու մի եկեղեցիներու ուսան, թուրք չկար այնտեղ տակաւին. սելճուկ թուրքերը հասան Անի՝ անոր անկման շրջանին, զայն կործանելու համար: Իսկ այսօր հարց է, որ այնքան խաղաղօրէն կ՚ապրէին միասին, ո՞ւր կորած են հայերը:

Բացի անկէ, որ բացման թուականը որոշուած է խնդրայարոյց ժամանակի մը, ո՞վ կը ներկայացնէ հայութիւնը, ըստ թուրքերուն, մանաւանդ ո՞վ կը ներկայացնէ Սփիւռքի հայութիւնը. նախարարը յստակօրէն չի պատասխաներ այդ հարցումին. երբ կ՚ըսէ. «Մենք հրաւիրած ենք Եւրոպական միութեան պատկանող երկիրներէ ներկայացուցիչներ: Կը հրաւիրենք նաեւ մշակոյթի նախարարները Ռուսաստանի, Հայաստանի, Լիբանանի, Սուրիոյ, Վրաստանի, Միացեալ Նահանգներու եւ Կանադայի, ուր հայկական հոծ գաղութներ կան. մենք կարեւոր դէմքեր հրաւիրած ենք սփիւռքէն, հոգեւոր եւ աշխարհիկ պետեր, ինչպէս նաեւ մշակութային կազմակերպութեանց ներկայացուցիչներ: 200 յայտնի հիւրեր պիտի ընդունինք»:

Հետաքրքրական է գիտնալ, թէ որո՞նք են այդ 200 յայտնի հիւրերը:

Թրքական այս արշաւին դիմաց համեմատաբար հեծ է Հայաստանի

մերիկեան «Թայմ» շաբաթաթերթի Եւրոպայի խմբագիրները, անոնց միջոցաւ մօտ կէս միլիոն DVD ցրուել տալով Եւրոպայի մէջ՝ Թուրքիոյ զբօսաշրջիկութիւնը քաջալերելու պատրուակին տակ Հայկական ցեղասպանութեան ոտացման արշաւը տանելով:

Տարբեր հարց, որ թերթին խմբագիրները անդրադառնալով իրենց համար լարուած ծուղակին, պատշաճաւոր սրբագրեցին կատարուած խաբէութիւնը: «Թայմ» շաբաթաթերթը իր կողմէ ներողութիւն խնդրեց հայոց դէմ կատարուած անարդարութեան համար, յետոյ ճշդեց իր պատշաճական դիրքորոշումը ցեղասպանութեան հարցին նկատմամբ եւ իր ծախսերով նոր խտասալիկ մը պատրաստելով ցրուեց բոլոր այն հասցէներուն, որոնք ստացած էին թրքական խեղաթիւրման խտասալիկը:

Այնպէս կը թուի, թէ թուրք նախարարը կը շարունակէ իր խարդաւանքի քաղաքականութիւնը՝ այս անգամ Աղթամարի բացման առիթը օգտագործելով քաղաքական նպատակներով: Բնականաբար մենք պէտք է իրապես ըլլանք եւ գիտնանք, թէ թուրքը միայն թուրքի նման պիտի մտածէ եւ պիտի ծառայէ իր պետութեան շահերուն, հետեւաբար մեր հերթին մենք ալ պիտի մտածենք հայու նման եւ հետամուտ ըլլանք մեր ազգային շահերուն:

Պէտք է հարց տալ, թէ ինչո՞ւ բացման այս հանդիսութեան թուականը որոշուած է ապրիլ 15-ին, երբ սկզբնական թուականը յայտարարուած էր անցեալ նոյեմբերը: Այս տարուան համար նախ յայտարարուած էր հանդիսութիւնը կայացնել ապրիլ 24-ին, կարծէք հեգնելու համար հայոց վիշտը: Սակայն ուժեղ հակադարձութիւններ եղան հայկական շրջանակներէ, եւ նախարարութիւնը ձեռնարկը տարաւ ապրիլ 11-ին, ինչ որ հին տոմարով դարձեալ կը համապատասխանէ ապրիլ 24-ին: Մինչդեռ ամբողջ ապրիլ ամիսը սուգի շրջան մըն է հայութեան համար:

Սկիզբը, երբ յայտարարուեցաւ ապրիլ 24 թուականը, ամէնէն ուժեղ հակադարձողը հանդիսացաւ Մեսրոպ պատրիարք Մութաֆեանը, որ յայտարարեց, թէ ոչ մէկ եկեղեցական կրնար մասնակցիլ այդ թուականին եւ մանաւանդ ինք անձամբ պիտի մերժէր երթալ Աղթամարի կղզին այդ թուականին: Անգամի մը համար Պատրիարքը արիութիւնը ունեցաւ կողմնորոշուելու հայկական շահերու ի նպաստ ընդդիմանալով թուրք պետութեան որոշման: Մինչ-

Ազգային Կառաջարկ

ԴԻՄՈՒՄ 08(182)/26.02.2007թ.
(տվյալներ տրամադրելու խնդրանքով)

ՀՀ գլխավոր դատախազ
պարոն Աղվան ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ
ՀՀ վճռաբեկ դատարանի
նախագահ պարոն
Հովհաննես ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ

Պարոնայք պաշտոնյաներ

ՀՀ կառավարության ընդունած «Հակակոռուպցիոն ռազմավարության եւ դրա իրականացման միջոցառումների ծրագիր» փաստաթղթում տրված է կոռուպցիայի սահմանումը՝ «Կոռուպցիան անձնական կամ այլ շահադիտական նպատակով, տարբեր ձեւերով արտահայտած (գործունեությամբ կամ անգործունեությամբ ի պաշտոնե տրված իշխանական լիազորությունների չարաշահումն է): Կոռուպցիան որպես վստահված իշխանության չարաշահում ունի մի շարք դրսեւորումներ եւ բազում «նրբերանգներ», որոնցից են կաշառակերությունը, կաշառք սպանելը, տալը, կաշառքի միջնորդությունը, կաշառքի շորթումը, հովանավորչությունը, պաշտոնական դիրքի կամ կապերի չարաշահումը, պաշտոնական լիազորությունները չարաշահելը կամ անցնելը, պաշտոնական կեղծիքը, պաշտոնական դիրքի օգտագործմամբ պետական սեփականության յուրացումն ու վատնումը, ինչպես նաեւ այլ պաշտոնական չարաշահումներ» (էջ 7):

Ի տարբերություն հայաստանյան չինովնիկների, ովքեր հայտարարում են ՀՀ-ում կոռուպցիայի նվազման մասին, արտասահմանյան մամուլում հաճախակի տպագրվում են հոդվածներ եւ բազմաթիվ միջազգային կազմակերպություններ կատարում են եզրակացություններ, որոնց համաձայն ՀՀ-ն ամենակոռումպացված պետություններից մեկն է:

Համոզված եմ, որ ՀՀ-ն կոռումպացված պետություն անվանելու պատճառներից մեկն էլ ՀՀ դատական եւ դատախազական համակարգերի կոռումպացված լինելն է:

Օրինակ, եթե դատախազական եւ դատական համակարգերը դեռեւս 1998 թ.-ին կաշառք չվերցնեին բազմաթիվ հանցագործություններ (ավազակային հարձակում եւ այլն) կատարած եւ 1996 թ.-ից Լոռու մարզի Ճոճկան գյուղի գյուղապետ Վարուժան Թամազյանից, ապա նա դեռեւս 1998 թ. կդատապարտվեր իր կատարած հանցագործությունների համար, մինչ օրս կգտնվեր անազատության մեջ եւ դրանից հետո նոր հանցագործություններ չէր կատարի, եթե դատախազական համակարգը 2000 թ. նույն Վ. Թամազյանից եւ Լոռու մարզի (նախկին) մարզպետ Հենրիկ Քոչինյանից կաշառք չվերցներ եւ նրանց դատապարտեր 1998 թ.-ին ՀՀ բյուջեից 100.000 դոլար յուրացնելու եւ ՀՀ բյուջեին առնվազն 130.000 դոլար վնաս պատճառելու համար, ապա նրանք մինչ օրս անազատության մեջ կգտնվեին եւ դրանից հետո միասին հերթական հանցագործությունը չէին ծրագրի ու իրականացնի, եթե դատախազական համակարգը 2002 թ., իսկ դատական համակարգը 2004 թ. Վ. Թամազյանից կաշառք վերցրած չլինեին, ապա այժմ նրա շանսաժներից չէին վախենա, իմ դիմումներին եւ հայտարարություններին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ընթացք կտային, իրականությունը կբացահայտեին եւ իրական մեղավորներին իրական պատասխանատվության կենթարկեին:

Համոզվելով, որ դատախազական եւ դատական համակարգերում հնարավոր չէ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով արդյունքի հասնել, ես նույնպես որոշել եմ օգտվել կոռումպացված համակարգերում իրականացվող տարբերակներից:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ՀՀ սահմանադրության 27.1 հոդվածի, «Տեղեկատվական ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի եւ 9-րդ հոդվածի 7-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները՝

խնդրում եմ Ձեզ

ինձ տրամադրել այն անձանց ցուցակը, որոնց պատվերը կատարելու դեպքում,

ինձ հայտնել կաշառքի այն չափը, որը վճարելու դեպքում

դատախազական եւ դատական համակարգերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ընթացք կտան իմ դիմումներին, հայտարարություններին ու բողոքներին:

ՀԱՅՈՐ ՄԱՐՈՅԱՆ
հասցեն՝ Ք. Ալավերդի,
Մայաք- Նովա 7/24
հեռախոս՝ /093/ 56-21-14

ՈՏՆՅԳՈՒԹՅՈՒՆ ՏԻՐՈՒԿԱԼՆԵՐԻ ԴԵՄ

Օլիգարխը՝ «փլեյբոյ»

Ես չգիտեմ՝ Հայաստանում որեւէ տեսարժեք առաջացրին ռուս օլիգարխ Միխայիլ Պրոխորովի անսովոր արկածները ֆրանսիական Կոտ-դ-Ազուրի լեռնադահուկային հանգստավայրում: Ռուսաստանում սկանդալի հետեւանքները իսկայական էին: Թեեւ ՁԼՄ-ները հիմնականում առաջադրեցին երկու վարկած՝ գծուծ ֆրանսիացիները նախանձում ու չեն սիրում կենսասեր ռուսներին, երկրդ, նախագահական գահին հավակնող ներքին գործերի նախարար Սարկոզին ռուս «փլեյբոյին» կալանքի տակ առավ իր վարկանիշը բարձրացնելու նպատակով (իբր, այդ սանձարձակ օտարերկրացիները, ովքեր էլ լինեն, պարտավոր են հարգալից լինել Ֆրանսիայի նկատմամբ):

Սակայն արդյոք այդքան պարզունակ են միջադեպի հենքերը: Ռուսական ազգայնական թերթերից մեկը միայն բացահայտել էր այդ իրադարձության բնավ էլ ոչ կենցաղային-բարոյական ենթատեքստը, որ կրկին հաստատում է այն համոզմունքը, որ քաղաքականությունը մարդկային գործունեության ամենանենգ, բազմաբեր, դժվարըմբռնելի ասպարեզներից մեկն է: Թեթեւաբարո աղջիկների հետ խրախճանք սարքած մեծահարուստ բիզնեսմենի դեմ տեղի ունեցել ոչ թե սոսկ ոստիկանական գործողություն, այլ... արդի գլոբալացման քաղաքականության «ծյուղային» մի ինտրիգ:

Ռուսաստանցի օլիգարխներն առհասարակ ինչպես իրենց երկրում, այնպես էլ նրանից դուրս ճանաչված են որպես խորհրդային պետական սեփականությունը կողոպտելով զավթած եւ բնական պաբարները շահագործող գիշատիչներ, որոնց համար հայրենասիրությունը ամենահետին զգացումն է: Սակայն պարզվում է, որ Պրոխորովը չի եղել սոսկ իր նիկելային կորպորացիայի շահերի մեջ պարփակված անձ, նա ձգտել է նոր ուղենիշներ փնտրել համաշխարհային ներքաղաքական անցուդարձում: Արդեն 90-ական թվականներին նա, վարձակալելով մերձմոսկովյան մի հյուրանոց, սկսել է այնտեղ աշխարհիկ հանդեսների հրավիրել այն տարիներին աչքի ընկնող երիտոնֆորմատորներ Չուբայսին, Կոխին, Նեմցովին եւ ուրիշներ, երեւելի բիզնեսմենների, կառավարության բարձրաստիճան ներկայացուցիչների եւ այլոց: Ինքնագոհ օլիգարխը խնդիր է դրել Ռուսաստանում ընտրասերել մարդաբանական նոր տիպ՝ վերնախավային նոր դասակարգ՝ արեւմտյան որակակարգով: Նրան հաջողվել է հասնել որոշակի հաջողությունների, սակայն դա նրան չի գոհացրել իր տեղայնությամբ: Եվ Պրոխորովը հայացքը հառել է ֆրանսիական հռչակավոր Լազուր ծովափին, ընդարձակելով իր դասակարգային աշխարհանված ստրատեգիայի աշխարհագրությունը: Նա նոր հավաքույթների կենտրոնատեղ է դարձրել Նիցցայի «Էդեմ ռոկ» հյուրանոցը, իսկ ձմռանը՝ Կոտ-դ-Ազուրը: Իհարկե, Պրոխորովը գիտակցել է, որ իրեն տակավին հասու չէ «ոսկե միլիարդի» շրջանակը, եւ իր համադարփակ ցանցի մեջ ներառել է ոչ արտոնյալ երկրների ներկայացուցիչներին (այդ ցուցակում հիշատակված է նաեւ Հայաստանը): Նորաթուխ ստրատեգը մտահղացել է համաշխարհային նոր ընտրախավ ստեղծելու ծրագրի միջոցառումներն անցկացնել կլոր տարին: Փաստորեն սկսել է ձեւավորել նոր ցանցային կառույց ի հակադրություն այն համակարգի, որ աներեւույթ կառավարում է աշխարհը: Անշուշտ, որպես նախկին խորհրդային անձնավորություն եւ ակամա «վայրենի» կապիտալիստ դարձած Պրոխորովը չէր կարող կազմավորել դասական մասոնական օթյակ. նա աշխարհիկ ռուս մարդ է՝ հեռու միստիկական ծեսերից ու խորհրդանշաններից: Փոխարենն առաջարկվում է շփումների համար միջոց դարձնել շեղ կերուխումները, զանազան վայելչները՝ չափավոր շվայտությամբ, եւ այլ աշխարհիկ միջոցառումներ: Մի խոսքով, նորահայտ անհատականություններին միավորում էր «համաշխարհային ընտրախավից» մերժված լինելու դառնահամ զգացումը: Այսինքն՝ չե՞ ուզում մեզ ընդունել ձեր շարքերը, ուրեմն մենք ստեղծում ենք նոր անկախ մոլորակային հանրություն:

Հրադարակման մեջ այստեղ նահանջ է կատարված եւ սեղմ պարզաբանումներ են տրվել աշխարհը կառավարող հնամյա վերնախավերի մասին, որոնք ավելի հաճախ ճանաչված են որպես անգլոսաքսոնական (ատլանտիստներ), որոնց մեջ, սակայն, գերիշխում է հրեական տարրը: Այդ կենտրոնները հիմնականում գտնվում են ԱՄՆ-ում եւ Մեծ Բրիտանիայում: Եվ այս կապակցությամբ վերհիշված է մի դրվագ, որը ճանաչողական է պրոխորովյան հանգույցի լուծման տեսանկյունից: Երբ Պրոխորովի գործընկեր« ռուսաստանցի հրեա օլիգարխ Մամուտը առաջին անգամ Լոնդոնում այցելում է հայտնի միլիարդատեր Նաթան Ռոտշիլդի կենտրոնականը, ապշում է նախատեսված հսկա... գլոբուսից. նրա վրա ոսկե դրոշակներով նշված են աշխարհի այն բոլոր վայրերը, որտեղ Ռոտշիլդներն ունեն իրենց կենսական շահերը: Բնականաբար, մոլորակի խորհրդանշանի վրա ազատ տեղ չկար: Իսկ չէ՞ որ Ռոտշիլդները միակ համաշխարհային գերդասանը չեն: Ընդ որում, նրանց բոլորի գործերը այս պատմական հատվածում այնքան էլ բարվոք չեն: Ամերիկան մինչեւ ականջները խրված է մերձավորարեւելյան խորխորատների մեջ եւ հայտնի չէ ինչպես կփրկի կաշին, ամերիկյան դոլարը խախուտացել է, Ռուսաստանը ոտքի է կանգնում, Չինաստանը երկմտում է՝ չփոխարինի՞ դոլարը եվրոյով, Լատինական Ամերիկան ձախամետ է, բուն Ամերիկայից արդյունաբերության ոչ ռազմավարական ճյուղերը տեղափոխվում են ուրիշ երկրներ եւ այլն: Եվ կարծես սա ինչ է, ոմն «չտես» ռուս բիզնեսմեն մարտահրավեր է նետում աշխարհի տիրակալներին: Շատ չեղա՞վ: Եվ հետեւում է հանկարծակի հարվածը. Ռուսաստանում Ռոտշիլդի աջ թեւը համարվող Ռոման Աբրամովիչը, այսպես ասած, դոլարի մի հարվածով (700 միլիոն) Պրոխորովի ձեռքից խլում է «Էդեմ ռոկը»՝ «նոր» համաշխարհային ցանցի հիմնական «աշխատանքային» օղակը: Շատ ավելի կործանիչ էր Կոտ-դ-Ազուրի միջադեպը, որը միջազգային «խաղացողին» վերածեց ցածրակարգ սեխուալ մոլագարի: Ավելին, Պրոխորովին զգացնել տվեցին, որ նրան կջախջախեն բուն Ռուսաստանում, եթե փորձի թքրտալ (պառակտվեց Պոտանին-Պրոխորով համատեղ նիկելային կայսրությունը):

Պրոխորովի դասը, ինչպես ասվեց, ուսանելի է համաշխարհային քաղաքականության իսկական իրողությունները ճանաչելու տեսանկյունից: Կարելի է հարցադրել՝ Պրոխորովը, որ հիմար մարդ չէ եւ որոշակի հաջողություններ էր հասել ինտերնացիոնալ հանրություն ստեղծելու մեջ, արդյոք անհա՞ն էր այն աստիճան, որ չկանխատեսեր իր ձեռնարկման վտանգավորությունը: Բանն այն է, որ դյուրությամբ կապիտալի տիրացած անձը իրոք այդպես էլ չհասկացավ, որ վերնախավային մակարդակի իմաստով փողը դեռ ամեն ինչ չէ: Իր ծագումով, դաստիարակությամբ, մտածելակերպով նա դեռ «խակ» էր աշխարհի հզորագույններին ձեռնոց նետելու համար: Նրա գործողությունների ամենախոցելի կողմն այն էր, որ օլիգարխը չառաջացրեց որեւէ կենսունակ գաղափարախոսություն: Իսկ եթե արդի աշխարհակարգը փորձում են սասանել նույնիսկ այդ ցածրակարգ ծայրամասային ուժերը, ուրեմն պետք է նրանց խստորեն պատժել: Կարծում եք այդ նույն Սարկոզին ֆրանսիական ժողովրդի բարոյասիրության ջատագո՞վն է: Իհարկե՝ ոչ: Նա հրեա է՝ ատլանտիստ, եւ կատարում է Ռոտշիլդի նմանների կամքը:

Եվս մի դիտարկում: Ատլանտիստներն առայժմ ի վիճակի են չեզոքացնելու Պրոխորովի նմաններին: Իսկն ասած, դա նրանց համար մակարդակ էլ չէ: Այդ ամենակուլների առջեւ այժմ հառնել է Չինաստանի չարագուշակ պատկերը: Այդ երկրի օրեցօր բազմապատկվող տնտեսական ու ռազմական կարողությունը, հազարամյակների ընթացքում ձեւավորված կոտ (անթափանց) բնավորությունը ընդունակ են փոխելու աշխարհակարգը բնավ էլ ոչ առաջինների օգտին: Անցյալ տարի, երբ չինացիները սոսկ ցանկություն հայտնեցին իրենց ակտիվները փոխարինելու եվրոյով, անմիջապես Չինաստանի մայրաքաղաքում հայտնվեցին ԱՄՆ-ի կառավարության տնտեսական շրջանակի հինգ նախարարներ: Ճիշտ է, այս անգամ նրանց հաջողվեց Պեկինին համոզել հետ կանգնել իրենց համար կործանարար այդ քայլից: Բայց մինչեւ ե՞րբ...

ՌՈՒԲԵՆ ՀԱՅԲԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա

Ղրղզ պատգամավորն առաջարկում է արտաքին պարտքը վճարել ափիոնով

Ղրղզստանի խորհրդարանի պատգամավոր Ազիմբեկ Բեկնազարովն առաջարկել է Աֆղանստանի օրինակով երկրում ափիոնային կակաչ ցանել, որպեսզի հնարավոր լինի մարել Ղրղզստանի արտաքին պարտքը:

Ի դեպ, Բեկնազարովն անցյալում երկրի գլխավոր դատախազն է եղել:

Մամլո ասուլիսում նա հայտարարել է, որ անհրաժեշտ են արմատական միջոցներ: «Եթե 1-2 տարի կակաչ աճեցնենք, ապա բոլոր միջազգային կազմակերպությունները կանհանգստանան եւ իրենք կառաջարկեն մարել մեր պարտքը», ընդգծել է պատգամավորը:

Ղրղզստանի արտաքին պարտքը կազմում է մոտ 2 մլրդ դոլար: Հանրապետության ֆինանսների նախարարության տվյալներով, երկիրն սպիտված կլիներ պարտքերի հաշվին վճարել 73 մլն դոլար:

Անցյալում հանրապետության ղեկավարությունն ուզում էր պարտքի գումարը նվազեցնել, անդամակցելով չափավորագույն երկրների պարտքերի դուրսգրում նախատեսող միջազգային կազմակերպությանը: Սակայն փետրվարի վերջերին կառավարությունը դեմ արտահայտվեց Ղրղզստանը «չափավորագույն երկիր» հռչակելու մտադրությանը, ինչպես նաեւ վարկատուների մի շարք պայմաններին, որոնք սահմանափակում են երկրի ինքնիշխանությունը:

Որոշ պատգամավորներ իրենց հերթին առաջարկում են առհասարակ հրաժարվել պարտքի վճարումից, ինչպես նաեւ բանտարկել ժամանակին փոխառություններին համաձայնած պաշտոնյաներին:

Պ. Ք.

ԹԵՐՄԱՆԻ ՆՈՐ ՔԱՅԼԸ

Իրանն ինքնուրույնաբար նոր ատոմակայան է կառուցում

Իրանի ատոմային էներգիայի կազմակերպության ղեկավար Ղոլամռզա Աղազադեն հայտարարել է, որ հանրապետությունն ինքնուրույնաբար սկսել է նոր ատոմային էլեկտրակայան կառուցել: Դոյթեր գործակալությունը մեջբերում է Աղազադեի այն խոսքերը, թե շինարարությունն սկսվել է նախագահ Մահմուդ Ահմադինեժադի անմիջական ցուցումով:

Նոր ԱԷԿ-ը կունենա 36 մեգավատ հզորություն: «Թշնամիները գիտեն, որ չեն կարող թուլացնել խաղաղ ատոմային էներգիա ունենալու մեր ժողովրդի կամքը», ընդգծել է Աղազադեն:

Բուշեհրում 20 տարի առաջ սկսված իրանական առաջին ատոմակայանի շինարարությունը դեռ չի ավարտվել: Գերմանական «Սիմենս» կոնցեռնի ծավալած շինարարությունն ընդհատվեց քաղաքական շարժառիթներով: 1995 թ. հունվարին Ռուսաստանն Իրանի հետ ստորագրեց պայմանագիր, որով պարտավորվեց ավարտել ԱԷԿ-ի առաջին էներգաբլոկի կառուցումը:

Պայմանագրով եւ ավելի ուշ կնքված լրացուցիչ համաձայնագրերով նախատեսվում է Բուշեհրի ատոմակայանը գործարկել 2007 թ. աշնանը:

Լյուիս Լիբբիի դատապարտումը «վշտացրել» է Չեյնիին եւ Բուշին

ԱՄՆ փոխնախագահ Դիկ Չեյնիի աշխատակազմի նախկին ղեկավար Լյուիս Լիբբին մարտի 6-ին դատարանում մեղավոր է ճանաչվել ՀՂԲ-ին կեղծ վկայություններ տալու եւ արդարադատությանը խոչընդոտելու մեջ:

«Բլումբերգ» գործակալությունը նշում է, որ մեղադրանքները ներկայացվել են ԿՀՎ գաղտնի գործակալ Վալերի Փլեյմի գաղտնազերծման հանգամանքների քննությունից հետո: Պարզվել է, որ Փլեյմի զբաղմունքի վերաբերյալ տեղեկատվության արտահոսքը կանխամտածված ձեւով կազմակերպվել է այն բանից հետո, երբ Վալերի Փլեյմի ամուսինը՝ դիվանագետ Ջոզեֆ Ուիլսոնը, Բուշի վարչակազմին մեղադրեց Իրաքին առնչվող հետախուզական տվյալների կեղծման մեջ: Հակաիրաքյան պատերազմի սանձազերծումից հետո պարզվեց, որ Իրաքում զանգվածային բնաջնջման զենք չի եղել:

Չեյնիի նախկին օգնականը դիտավորյալ ստել է քննչական մարմիններին: Վերջիններս փորձում էին պարզել, թե 2003 թ. ով է մամուլին հայտնել հետախույզ Վալերի Փլեյմի անունը, որի ամուսինը՝ նախկին դեսպան Ջոզեֆ Ուիլսոնը, Իրաքի պատերազմի հայտնի հակառակորդներից է:

Թեեւ Լիբբին անձամբ չի մեղադրվում Փլեյմի անվան գաղտնազերծման մեջ, նա մեղավոր է ճանաչված կեղծ վկայություններ ու ցուցմունքներ տալու եւ արդարադատությանը խոչընդոտելու մեջ: Տվյալ դեպքում մեղադրանքները բավարար են նրան մինչեւ 30 տարով ազատազրկելու համար:

«Ես շատ հիասթափված եմ դատավճռից: Լիբբին երկարատեւ պետական ծառայության ընթացքում անդուլ կերպով եւ մեծ ջանասիրությամբ ծառայել է մեր ազգին», հայտարարել է փոխնախագահ Դիկ Չեյնին:

Սպիտակ տան մամլո քարտուղար Դանա Պերինոն իր հերթին լրագրողներին ասել է, որ նախագահ Ջորջ Բուշը «հարգում է դատավճիռը», բայց «վշտացած է Լիբբիի եւ նրա ընտանիքի ճակատագրի կապակցությամբ»:

Կոնգրեսի նախագահ Նենսի Փելոսին անկողմնակալ ելույթ է ունեցել, ասելով, որ դատավճիռը «անխախտ կերպով բացահայտեց Բուշի վարչակազմում ազգային անվտանգությանն առնչվող կարեւոր տեղեկատվության նկատմամբ կողմից ու անկանոն վերաբերմունքը, ինչպես նաեւ Իրաքի պատերազմի քննադատությունը ճնշելու դիտավորությունը»:

Աղետ Ջոկյակարտայի օդանավակայանում



Ինդոնեզական «Գարուդա» ավիաընկերության «Բոինգ-737» օդանավը երեկ Ճավա կղզու Ջոկյակարտա քաղաքի օդանավակայանում վայրէջք կատարելու պահին վթարվել է եւ այրվել: Աջեւի անիվների շրջանում բռնկած կրակը տարածվել է ամբողջ օդանավում, որտեղ կային 133 ուղեւոր եւ անձնակազմի 7 անդամներ: Ջոհվել է ընդամենը 24 մարդ:

Մայրաքաղաք Ջակարտայից թռած օդանավն ամբողջովին այրվել է: Ականատեսներից մեկը BBC-ի թղթակցին պատմել է, որ վայրէջքի պահին պոկվել է աջեւի անիվներից մեկը, ապա պոկվել եւ բռնկվել են հետեւի անիվները: Օդանավը բախվել է օդանավակայանի պարսպին, բոցավառվել եւ ի վերջո կանգ առել բլրի դաշտում: Ջոհվել է 22 մարդ:

Ջակարտա-Ջոկյակարտա չվերթի աղետյալ օդանավում, տեղացիներից բացի, եղել են առնվազն 10 ավստրալացիներ՝ դիվանագետներ եւ լրագրողներ, որոնք Ինդոնեզիա էին եկել Ավստրալիայի արտգործնախարարի եւ գլխավոր դատախազի այցը լուսաբանելու:

Ինդոնեզիայում վերջերս փոխադրամիջոցների հետ կապված մի շարք աղետներ են եղել: Մասնավորապես այս տարվա հունվարին ռադարների էկրաններից անհետացավ «Ադամ էյր» ավիաընկերության օդանավն իր 102 ուղեւորներով, իսկ 2006 թ. դեկտեմբերի վերջերին լաստանավի աղետից զոհվեցին հարյուրավոր մարդիկ:

Պ. Ք.

Մշակույթ

«Եվ դու կաս հզոր, մարմնացում ուժի»

Այս տարի լրանում է Եղիշե Չարենցի հարյուր տասներորդ տարեդարձը: Տարեդարձ, որվհետեւ ըստ ՀՀ կառավարության որոշման հոբելյանական տարի է համարվում հարյուրը, հարյուր քսանհինգը, հարյուր հիսունը... Սակայն հնարավոր չէր շրջանցել Եղիշե Չարենցի տարեդարձը: Տարին դեռ չսկսված Եղիշե Չարենցի տուն թանգարան «Ինչ է նախատեսվում անել» հարցով դիմել են տարբեր կազմակերպություններից: Հայաստանի գրողների միությունը, ՈԴ գրողների միությունը, Չարենցի տուն թանգարանը համատեղ ծրագրել են «Եվ դու կաս՝ հզոր, մարմնացում ուժի» խորագրով գրական միջոցառումների մի ամբողջ շղթա, որը վերցրել են Չարենցի «Վահագն» բանաստեղծությունից: Չարենցյան թեմաներով հանդիպումներ կլինեն Երեւան քաղաքի դպրոցներում, Երեւանի պետական համալսարանի Չարենցի անունը կրող լսարանում, Ազգային բանակի զինվորական տարբեր ստորաբաժանումներում, միջոցառումներ կլինեն նաեւ Արցախում: Չարենցի տուն թանգարանում կլինի պատանի ստեղծագործողների նկարների ցուցահանդես, որտեղ կարտացոլվեն պատանիների պատկերացումները հայրենասիրության մասին: Չարենցին է նվիրվելու Հայաստանի գրողների միության «Արեգնածին» գրական խմբակի այս տարվա մրցանակաբաշխությունն ու գիտության եւ կրթության նախարարության կողմից կազմակերպվող հանրապետական աստմունքի փառատոնը: Այս գրական երաժշտական երեկոների շրջանակում կհնչի միայն չարենցյան պոեզիա:

Եղիշե Չարենցի դուստր Անահիտ Չարենցը եւ հայտնի հրատարակիչ Ալբերտ Իսոյանը միասին Չարենցի ձեռագրերի հիման վրա կազմել են Եղիշե Չարենցի ստեղծագործությունների մի ընտրանի, որտեղ զետեղվել են նաեւ մի քանի անտիպ գործեր, որոնք նա գրել է իր կյանքի վերջին տարիներին՝ «Գիրք ճանապարհի» վեպը գրելուց հետո: Անտիպ էջերը բացելու են այն քողը, որով ծածկված են եղել Չարենցի կյանքի վերջին տարիներն ու ամիսները: Այդ գործերը բանաստեղծի ինքնախոստովանություններն են, նրա հոգեկարը: Այն կհրատարակվի «Վերջին խոսք» վերնագրով:

Եղիշե Չարենցի ծննդյան տարեթիվը կնշվի նաեւ ՈԴ-ում: Նախաձեռնել են «Չարենց, թույլ տուր հենվել քեզ» խորագրով գրական երեկոներ: Միջոցառումների խորագիրը վերցրել են Եվգենի Եվտուշենկոյի Չարենցին նվիրված ստեղծագործությունից: «Կարծում եմ, այդ տողը լավագույնս է արտահայտում Չարենցի նկատմամբ մեր ժողովրդի վերաբերմունքը», ասել է Հայաստանի հետ համագործակցության ռուսական ընկերության նախագահ, ՀԳՄ անդամ Վիկտոր Կրիվոռուչկովը: Չարենցյան թեմաներով հանդիպումներ կլինեն ռուս ընթերցողների հետ ոչ միայն Մոսկվայում, այլեւ Ռուսաստանի այլ քաղաքներում: Նախատեսվում է հրատարակել Չարենցի անտիպ գործերի ռուսերեն ժողովածուն: Այդ նպատակով հրավիրվել են թարգմանիչներ Միխայիլ Սինելնիկովին, որին կօգնեն արվեստաբան Էմմա Բուդաղյանն ու բանաստեղծ, թարգմանիչ Գլան Օնանյանը:

Չարենցի «հոբելյանին» իրենց մասնակցությունն են բերել նրա ժառանգները՝ Անահիտ Չարենցը, Արփենիկ Չարենցը, թոռնուհի Հասմիկ Չարենցը, անվանի աստմունքողներ Ազատ Գասպարյանը, Ժենյա Ավետիսյանը եւ շատ ուրիշներ: ՀԳՄ, ՈԴ գրողների միությունը, Եղիշե Չարենցի տուն թանգարանը տարին հայտարարել են Չարենցյան տարի: Այս սիմպոզիումի շրջանակներվի մարտի 13-ին, ժամը 12-ին Չարենցի անունը կրող հուշակոթողի շուրջը, որից հետո ցերեկույթը կշարունակվի Եղիշե Չարենցի տուն-թանգարանում:

ԺԵՆՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Իտալական Չիֆոնի կինոփառատոնի փորձը Հայաստանին

Կինոյի եւ հեռուստատեսության զարգացման հայկական հիմնադրամը, երեխաների եւ պատանիների «Ռոլան Բիկովի» ֆոնդը մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարության աջակցությամբ նախորդ տարվա նոյեմբերին կազմակերպել էր մանկապատանեկան ֆիլմերի երկրորդ միջազգային կինոփառատոնը՝ հանրապետության առաջին տիկին Բելա Քոչարյանի հովանավորությամբ: Փառատոնին մասնակցել են ափխարհի 18 երկրների 44 ֆիլմեր: Միջազգային մանկապատանեկան կինոփառատոնի շրջանակներում, որն ի դեպ փոխնախարար **Կարինե Խոդիկյանի** հավաստմամբ միակն է տարածաշրջանում, հանդիսատես-երեխաների եւ պատանի կինեմատոգրաֆիստների համար կազմակերպվել են ստեղծագործական հանդիպումներ եւ վարպետության դասընթացներ: Երկրորդ փուլում նախատեսվում է Հայաստանի մարզերում եւ Ղարաբաղում անցկացնել համատեղ հանդիպումներ եւ կինոդահլիճներում, դպրոցներում ու մանկատներում կազմակերպել բարեգործական կինոդիտումներ: Արդյունքում 10 հազար երեխա հնարավորություն կունենա դիտելու փառատոնի ժամանակ ցուցադրված լավագույն մանկական ֆիլմերը:

Երեկ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարությունում պետք է ամփոփեին միջազգային կինոփառատոնի արդյունքները, սակայն հարգելի պատճառներով բացակայում էր հիմնադրամի տնօրենը, որին էլ վստահված էր կինոփառատոնն ամփոփելու գործը: Նախարարությունում հյուրընկալվել էին հիմնադրամի ներկայացուցիչներ, իտալական հայտնի «Չիֆոնի» մանկական միջազգային կինոփառատոնի տնօրեն Կլաուդիո Գուբիտոսին եւ Իտալիայի դեսպանության առաջին քարտուղար Ռոբերտո Նոչելան: Մշակույթի եւ երիտասարդական հարցերի փոխնախարար Կարինե Խոդիկյանն ուրախությամբ ընդգծեց, որ մանկապատանեկան ֆիլմերի երկրորդ միջազգային կինոփառատոնը գործընկերներ է ձեռք բերում ոչ միայն Հայաստանում, այլեւ նրա սահմաններից դուրս:

Հայ-իտալական մանկական կինոփառատոնների ուրվագծվող համագործակցության մասին խոսելիս «Չիֆոնի» մանկական միջազգային կինոփառատոնների տնօրեն **Կլաուդիո Գուբիտոսին:** Նախ նա հայտնեց, որ մեր երկիրն այսուհետեւ մաս է կազմելու «Չիֆոնի» ֆիլմերի փառատոների ալյանսին, որին մասնակցում են նաեւ ԱՄՆ-ն, Ավստրիան, Լեհաստանը, Ռուսաստանը, Արաբական Միացյալ Էմիրությունները (ԱՄԷ): Հայաստանը նաեւ հնարավորություն կունենա 350 պետությունների շարքում մասնակցելու «Չիֆոնի» կինոփառատոնին, որը տեղի կունենա Իտալիայի Չիֆոնի քաղաքում՝ ընթացիկ տարվա հունիսին: Մեր երկրում մանկապատանեկան կինեմատոգրաֆիային աջակցելու համար, կինոփառատոնների տնօրենի խոսքով, իրենք կֆինանսավորեն եւ երիտասարդների համար մեկամսյա մասնագիտական դասընթացներ կկազմակերպեն Իտալիայում: «Հայաստանը բոլոր առումներով մաս կկազմի «Չիֆոնիին» եւ կկարողանա մասնակցել ոչ միայն փառատոնին, այլեւ նրա կազմակերպած բոլոր միջոցառումներին», ասաց Կլաուդիո Գուբիտոսին՝ հավելելով, որ իրենք կխնայեն իտալական փորձը մեր երկրին փոխանցելու բոլոր հնարավորությունները:

Հայ հին մշակույթով հիացած եւ մեր ազգի հնությունը մեծ արժեք համարող իտալացին հայտնեց, որ իրենք առաջիկայում 2 տեսախցիկ կնվիրեն երիտասարդական 2 խմբի, որոնք կարող են տասը՝ թեկուզ երեւակայական պատմություն նկարել մեր երկրի տասը վանքերի մասին: Նա խոստացավ, որ եթե որեւէ մի ֆիլմը պատրաստ լինի հունիսին, իրենք այն կներկայացնեն «Չիֆոնի» կինոփառատոնին:

ԳՈՌԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Մարտիրոսյան ցուցահանդեսում

«Ալբերտ եւ Թովմաս Բոյաջյան» ցուցասրահում գարնանային առաջին տոնի առիթով ներկայացված են ժամանակակից հայ նկարչուհիների մի շարք աշխատանքներ: Ընտրված են Լուսիկ Ագուլեցու, Լիլիթ Սողոմոնյանի, Ամալյա Վարդանյանի, Մոնի Հովսեփյանի, Մարինե Դիլանյանի, Արփի Վարդանյանի, Սոնա Բանոյանի, Մարիամ Պետրոսյանի, Թենի Վարդանյանի գործերից: Ոճական կամ թեմատիկ ընդհանրություններ չկան, «Հազար խաչքաշ ու գարնան օր ու ծիածան» խորագիրը կրող ցուցահանդեսում կանացի տարրը բացակայում է: Առհասարակ խմբակային ցուցադրություններում որեւէ նկարչի մտածողական ու գունազգացողական ամբողջականությունը ինչ-որ առումներով տուժում է, թեեւ ընդգծված անհատականության պարագայում դրանք ակնհայտ են:

Իհարկե, դժվար չէ տարբերակել Սեդա Բեքարյանի բաց-տարածական, մտածողական աշխարհը, Լուսիկ Ագուլեցու թանձր յուղաներկային վրձնահարվածներով գյուղաշխարհի ճնարական լռությունը, կամ Թենի Վարդանյանի ներքին դիմանկարի՝ աղճատած ֆիգուրներով քառասային աշխարհի պատկերները: Աչքառու են Մոնի Հովսեփյանի «Մեդիտացիաները» եւ Սոնա Բանոյանի ապակու միջոցով ներկայացրած գունագեղեցիկ «խաղը»: Խմբանկարում առանձնահատուկ երանգ ունի Լիլիթ Սողոմոնյանի՝ գծանկարային պարզությամբ, բայց ներքին խորքով պատկերները:

Ցուցահանդեսը կազմակերպել էր Համազգային հայ կրթական եւ մշակութային միությունը: Ներկա էին Կարեն Աղամյանը, սոցարդ նախարար Աղվան Վարդանյանը, Լիլիթ Գալստյանը եւ ուրիշներ:

Մ. Ռ.

ԳՈ՛ՍՏԱԿ

Նա մեզ է հայտնագործում ամեն օր ու ամեն ժամ

«Բամբուկից ու կավից շինված մի երկու տասնյակ խրճիթներով փոքրիկ ավան էր այդ տարիների Մակոնդոն, որ ծվարել էր ճեռնակ, հոկված, նախապատմական ձվերի չափ հսկայական քարերով հուն ու թափանցիկ ջրեր ունեցող գետակի ափին: Աշխարհն այնպես նորաթուխ էր, որ շատ իրեր դեռ անվանում չունեին, եւ մարդիկ ստիպված էին մատով ցույց տալ...»:

Ահա այսպես, անանուն իրերի աշխարհում՝ Առակատակայում (որը հետո վերում տիտի կոչվեր Մակոնդո) 1928 թվականին ծնվեց Գաբրիել Գարսիա Մարկեսը, որը տիտի դառնար ոչ միայն իսպանալեզու, այլեւ ընդհանրապես համաշխարհային գրականության մեծերից մեկը: Գաբրիելի մանկության տարիներին (նրա իսկ նկարագրությամբ) իրերն ու առարկաները անընդհատ շարժման մեջ էին, հրաշալի ու սարսափելի էին սերն ու ատելությունը, եւ մանկան հզոր աչքի պատճառով սեղանին դրված ափսեն ու բաժակը գալիս, ընկնում էին սեղանից:

Հետո տիտի Մակոնդոն լցվեր թափառական գնչուներով, որոնց տիտի գրողը գնչու հայ կոչի, աշխարհի բոլոր ծայրերից այստեղ տիտի գան մարդիկ, որ վագոններ տիտի դնեն փողոցներում ու նախնական-աշխարհաստեղծ պահի սանչացումը տիտի դառնար առօրեական, ճղճիմ: Հետո տիտի պատերազմներ սկսվեին, գնդապետ Առուելիանո Բուենդան գնդակահարվեր պատի տակ: Թավ մորմով, բարակ, թոչնաթաթի նման կոկված մատներով մատներ մի գնչու, ով իրեն Մելքիադես էր կոչում, տիտի «իրագործեր աշխարհի ութերորդ հրաշալիքի փայլուն ցուցադրումը»:

... 1945 թվականին մայրը խնդրում է որդուն իր հետ մեկնել Առակատա՝ վաճառելու Մարկեսների տունը: Պատանու երեւակայությունը բորբոքվում է կորած մանկության աշխարհի հետ հանդիպումից: Մեռած, ոչնչով կենդանության նշան ցույց չտվող քաղաքի փոշոտ փողոցներից մեկում գտնվող դեղատանը Գաբրիելի մայրը բարետամ է լուտ ասեղնագործող մի կնոջ՝ «Ինչ ես խնամի»,- հարցնում է մայրը: Կինը բարձրացնում է աչքերը, ճանաչում է եկվորին եւ նրանք գրկախառնվում են, երկար լալիս:

«Այդ պահին, ահա, գլխումս միտք ծագեց գրել այդ դիտվածի ողջ նախապատմությունը»,- հետագայում հիշելու է Մարկեսը: Նա նույնիսկ սկսում է գրել, բայց շատ շուտով գլխի է ընկնում, որ իր ուժերից վեր գործ է ձեռնարկել: Նա միայն մեկ պարբերություն է գրում, որը հետո դառնալու էր նրա հրաշալի վեպի՝ «Հարյուր տարվա մենության» առաջին պարբերությունը:

«Ամենամեծ դժվարությունը վեպի լեզվի հարցն էր: Էլի քսան տարի աշխատելուց եւ աշակերտական չորս գիրք գրելուց հետո միայն ես տիտի հասկանայի, որ լեզվի հարցի լուծումն էր ամենակարեւորը: Անհրաժեշտ էր պատմել այնպես, ինչպես պատմում էին իմ պառաները, այսինքն՝ անկիրթ, բացարձակ հանգստությամբ, ինչը չտիտի խախտվեր, եթե, նույնիսկ, աշխարհը շուտ գար»:

... Կարդում ես Մարկես, կարդում ես նրա «Հարյուր տարվա մենություն», «Նահապետի աշունը», «Գնդապետին ոչ ոք չէր գրում», «Չարաբաստիկ ժամը» վեպերը, նրա «Մեծ մոր հուղարկավորությունը» եւ այլ պատմվածքներ ու զգում ես, որ թեեւ ժամանակը ուժգին բաբախում է ձեր արյան մեջ, սակայն ամեն ինչ հարթ, անշտապ է ընթանում: Իրադարձությունների շտապողականություն կամ հապճեպություն չկա (ինչպես խորհրդ Լուիս Բորխեսի շատ ու շատ հրաշալի էսսեներում): Ամեն դեպքում Մարկեսի գիրը, ինչպես վայել է համամարդկային եւ համաժամանակյա արժեքներ կրողներին, պատմության հանդարտությունը փոխհատուցում է կրքերի ուժգին բախումներով, մեր երազանքներով ու դաժան հուսախաբություններով:

Չիլիացի նշանավոր բանաստեղծ Պաբլո Ներուդան Մարկեսի «Հարյուր տարվա մենությունը» լավագույնն է համարել իսպանալեզու գրականության մեջ «Դոն Կիխոտից» հետո: Գուցե չափազանցությո՞ւն է: Չգիտեմ: Ամեն դեպքում աշխարհն ու մարդկային բնավորությունը բազմաթիվ խորքեր ունի: Եվ հանճարեղության հասնող տինանք է պետք բոլոր շերտերը ոչ միայն պեղելու, այլեւ նույնքան հանճարեղ ձեւով ներկայացնելու համար: Եվ միայն այս դեպքում գիրդ ու դու կմնաս անմեռ: Ինչպես Գաբրիել Գարսիա Մարկեսը, մեր մեջ արդած ամենագեղեցիկ աշխարհը (նաեւ սարսափելին) հայտնագործողը:

ՍԵՐԳԵՅ ՉԱԼԼՈՅԱՆ

ԾԱՂԻԿԱԿԱՐԳԻ ԱՅՔԵՐՈՎ

«Բարսելոնը» վայր դրեց գավաթակրի լիազորությունները

Չեմպիոնների լիգայի գավաթակիր իսպանական «Բարսելոնին» այդպես էլ չհաջողվեց երկու խաղերի ընդհանուր արդյունքով գերազանցել «Լիվերպուլին» եւ արդեն 1/8 եզրափակիչում վայր դրեց լիազորությունները: Առաջին խաղում, սեփական հարկի տակ «Լիվերպուլից» 1-2 հաշվով կրած պարտությունը բարսելոնցիներին պատասխան մրցավեճում չափազանց դժվարին կացության մեջ էր դրել: Պայմարը շարունակելու համար անհրաժեշտ էր մրցակցի դարպասն առնվազն 2 անպատասխան գոլ խփել:

Առաջին խաղակեսում «Լիվերպուլը» պաշտպանությունում հստակ էր գործում եւ մրցակցին դժվար էր ճեղքել թիկունքը: Իսկ ահա առջեւ գնում դաշտի տերերը բավական ակտիվ էին գործում եւ 11 հարված հասցրին մրցակցի դարպասին: Ընդորում, Ռիսեի եւ Սիսոկոյի հարվածները ցնցեցին «Բարսելոնի» դարպասածողը: Ընդմիջումից հետո հյուրերը բավական ակտիվացան եւ կարողացան մեկ գոլ խփել, սակայն դա բավարար չէր պայմարը շարունակելու համար: Այս անգամ էլ ավանդույթը չխախտվեց: Չեմպիոնների գավաթակրին չհաջողվեց պահպանել տիտղոսը: Խաղից հետո թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքը հայտնեցին.

Ռաֆայել Բենիտես («Լիվերպուլ»)- Հպարտ եմ սաներովս եւ թիմի երկրպագուներով: Խաղը բավական անսովոր ստացվեց, սակայն ի վերջո մեզ հաջողվեց հաջորդ փուլի ուղեգիր նվաճել: Առաջին խաղակեսում մեկ անգամ չէ, որ պետք է գրավեինք մրցակցի դարպասը: Ընդմիջումից հետո եւս տիրում էինք նախաձեռնությանը, բայց խաղավերջում ստիպված էինք նյարդայնանալ: Երբ հյուրերին հաջողվեց բացել հաշիվը, սաներս որոշակիորեն արդեն հոգնել էին: Չնայած դրան, հակագրոհների ժամանակ հաջողվում էր գոլային պահեր ստեղծել: Մեր խաղը գրեթե իդեալական էր, բայց այնուամենայնիվ գոլ բաց թողեցինք: Հաջորդ փուլ մտնելը մեզ լրացուցիչ լիցք է հաղորդել: Տեսնենք, թե վիճակահանությունը մեզ ում մրցակից կընտրի:

Ֆրանկ Ռայկարդ («Բարսելոն»)- 1-0 հաշվի ժամանակ ամեն ինչ հնարավոր էր եւ եթե մի փոքր հաջողությունն ուղեկցեր մեզ, ապա կարող էինք հաջորդ փուլ մտնել: Մեր ֆուտբոլիստները գործում էին ուժերի լրիվ ներդրումով, բայց չկարողացան իրենց լավագույն խաղը ցուցադրել: Շնորհավորում եմ «Լիվերպուլին»: Մեր մրցակիցը հիանալի էր խաղում եւ մի շարք վսանգավոր պահեր ստեղծեցինք Վիկտոր Վալդեսի դարպասին: Ամեն դեպքում, մեր մրցակցությունում վճռորոշը թիմերի առաջին հանդիպումն էր:

Չեմպիոնների գավաթը նվաճելու «Լիոնի» երազանքը 5-rդ տարին անընդմեջ մնաց անկատար: «Ռոմայի» հետ հյուրընկալվելիս գրանցված ոչ-ոքի (0-0) արդյունքը Ֆրանսիայի չեմպիոնին հաջորդ փուլ մտնելու լավ հնարավորություն էր ընձեռել: Նախորդ չորս խաղարկություններում «Լիոնը» հասել էր մինչեւ քառորդ եզրափակիչ: Այս անգամ դա էլ չհաջողվեց: Դեռեւս առաջին խաղակեսում Տոտիի եւ Մանչինիի խփած գոլերը հաղթական պարգեւեցին «Ռոմային»:

Իսկ ահա «Չելսիին», ի տարբերություն «Լիոնի», հաջողվեց սեփական հարկի տակ առավելության հասնել մրցակցի՝ «Պորտոյի» նկատմամբ: Ճիշտ է, առաջին խաղակեսից հետո պորտուգալացիները խաղը շահում էին 1-0 հաշվով, բայց «Չելսիին» հաջողվեց 2 գոլ խփել ու հաղթել: Վճռորոշ եղավ Բալակի խփած գնդակը:

Ժոզե Մոուրինյո («Չելսի»)- Կարծում եմ, առաջին խաղակեսում մրցակիցը մեզանից լավ էր խաղում: Ընդմիջմանը ֆուտբոլիստներին խնդրեցի ներդնել ողջ ուժերը: Վճռորոշ դեր խաղաց ընդմիջմանը կատարված փոփոխությունը: Եվ 2-rդ խաղակեսում ցուցադրած խաղով մենք արժանի էինք հաղթանակի: «Պորտոն» եւս կարող է հպարտանալ իր ցուցադրած խաղով:

Ժեզուալդու Ֆերեյրա («Պորտո»)- Առաջին խաղակեսում մենք ուժեղ էինք «Չելսիից» եւ հաշվի մեջ առաջ անցնելն օրինաչափ էր: Լոնդոնցիների հաջողությունում վճռորոշ էր կատարված փոփոխությունը. Միքելը փոխեց մրցակցության ընթացքը: Ստիպված էինք վերադասավորել ուժերը, բայց պարտությունից խուսափել չհաջողվեց: Արդյունքը համապատասխանում է խաղին: Հպարտ եմ իմ թիմով: «Պորտոն» ուժեղ թիմ է, որը կփորձի արժանիորեն հանդես գալ Չեմպիոնների լիգայի հաջորդ խաղարկությունում: Գիտեմ, թե ինչպես արդյունքի հասնել: Այսօր հաջողության կարող էր հասնել մրցակիցներից յուրաքանչյուրը:

«Վալենսիան» շնորհիվ առաջին խաղում հյուրընկալվելիս «Ինտերի» հետ գրանցած գոլառատ ոչ-ոքիի (2-2) մտավ հաջորդ փուլ: Սեփական հարկի տակ դարպասները մնացին անառիկ: Խաղի ավարտից անմիջապես հետո խաղադաշտում երկու թիմերի ֆուտբոլիստների միջեւ ծեծկռտուք սկսվեց: Միջադեպը հաջողվեց հարթել միայն ոստիկանների միջամտությամբ:

Կառլսենը շարունակում է Անանդի հետապնդումը

Լինարեսի շախմատի մրցաշարի 11-rդ տուրում միայն մեկ պարտիա արդյունավետ ելք ունեցավ: Մրցաշարի ամենակրտսեր մասնակից, 17-ամյա Մագնուս Կառլսենը սպիտակներով պարտության մատնեց Վասիլի Իվանչուկին: Հետաքրքրական է, որ առաջին շրջանի պարտիայում էլ, մեքսիկական Մորելիա քաղաքում Կառլսենը հաղթել էր ուկրաինացի գրոսմայստերին: Վերջինս երկու պարտություն է կրել մրցաշարում եւ երկուսն էլ Կառլսենից:

Լեւոն Արոնյանը շարունակում է ոչ-ոքիների շարքը: Հերթական ոչ-ոքին գրանցվեց Պետեր Լեկոյի հետ մրցավեճում: Հաշտություն կնքեցին նաեւ Մորոզեւիչն ու Անանդը, Սվիդլերն ու Թոփալովը: 11 տուրից հետո առաջատարը 7 միավորով գլխավորում է հնդիկ գրոսմայստեր Վիշվանաթան Անանդը: Նա առայժմ միակ պարտությունը կրել է Լեւոն Արոնյանից, իսկ ահա իրենից կես միավոր պակաս վաստակած Մագնուս Կառլսենին երկու անգամ հաղթել է: 5,5-ական միավորով 3-5-rդ տեղերն են բաժանում Լեւոն Արոնյանը, Պյոտր Սվիդլերը եւ Վասիլի Իվանչուկը: Նրանցից կես միավորով հետ է մնում Վեսելին Թոփալովը, որին հաջորդում են Ալեքսանդր Մորոզեւիչն ու Պետեր Լեկոն (4,5-ական միավոր):

Հաջող խնդություն տաշքենդյան մրցաշրջում

Տաշքենդում ավարտված ըմբշամարտի միջազգային մրցաշարում 13 երկրների ըմբիշների թվում էին նաեւ մեր հանրապետության ազգ եւ հունահռոմեական ոճի ըմբիշները:

Առավել հաջող հանդես եկան մեր հունահռոմեական ոճի ըմբիշները, որոնք քաշային չորս կարգում արժանացան մեդալների: Հաճելի անակնկալ մատուցեց երիտասարդ ըմբիշ Արման Ադիկյանը, որը 66 կգ քաշային կարգում հաղթեց իր մրցակիցներին եւ կանգնեց պատվո պատվանդանի վերին աստիճանին: Հայաստանի դրոշի ներքո հանդես եկող ռուսաստանցի Յուրի Պատրիկեեւն իր հավատարը չուներ գերծանր քաշային մրցավեճում: Նա եւս արժանացավ ոսկե մեդալի: Եզրափակիչում նա գոտեմարտեց Վրաստանի ներկայացուցչի հետ, որին աբխազիի նախորդ առաջնությունում պարտվել էր: Պատրիկեեւին հաջողվեց ռեւանշի հասնել նրա նկատմամբ:

Հայաստանից մինչեւ եզրափակիչ փուլ հասավ նաեւ Արման Գեղամյանը (96 կգ): Սակայն նա պարտվեց վճռորոշ գոտեմարտում եւ բավարարվեց արծաթե մեդալով: Իսկ մեր հավաքականի մեկ այլ լեգեոնական՝ Դենիս Ֆորվն արժանացավ բրոնզե պարգեւի:

Մեր ազգ ոճայինների ելույթներն այնքան էլ հաջող չէին: Հայաստանի հավաքականից միայն Վադիմ Լալիեւին հաջողվեց դառնալ մրցանակակիր: 74 կգ քաշային կարգում ռուսաստանցի ըմբիշը պարտության մատնեց բոլոր մրցակիցներին եւ գրավեց առաջին տեղը: Միհրան Զաքարյանը (55 կգ) զբաղեցրեց 5-rդ հորիզոնականը:

Նշենք, որ բացի մեդալներից, մրցանակակիրները պարգեւատրվեցին դրամական պարգեւներով: Հաղթողները ստացան 3 հազար դոլար, 2-rդ եւ 3-rդ մրցանակակիրները՝ համապատասխանաբար՝ 2000 եւ 1000-ական դոլար: Ի դեպ, Տաշքենդում բնակվող մեր հայրենակիցները ՀՀ հավաքականից մրցանակակիրներին լրացուցիչ պարգեւատրեցին համապատասխանաբար 1000, 500 եւ 300 դոլարով:

Ուժերի փորձարկում արտերկրում

Ինչպես արդեն տեղեկացրել ենք, հանրապետության առաջատար ֆուտբոլային չորս թիմերն այս օրերին ուսումնամարզական հավաք են անցկացնում արտերկրում: Երեւանի «Արարատը» Մակեդոնիայում իր երկրորդ ստուգողական հանդիպումն անցկացրեց այդ երկրի չեմպիոն «Ռաբոտնիչկիի» հետ: Համառ մրցապայքարում արարատցիները 1-2 հաշվով զիջեցին մրցակցին: Ա-րարատից» գոլն իր հաշվին է գրանցել Նշան Երզրումյանը՝ իրացնելով 11 մ հարվածը: «Ռաբոտնիչկին» ընթացիկ առաջնությունում էլ հաջող է հանդես գալիս՝ գլխավորելով մրցաշարային աղյուսակը: 19 խաղից հետո թիմը վաստակել է 40 միավոր: «Բանանցը», «Միկան» ու «Փյունիկն» ուսումնամարզական հավաք են անցկացնում Անթալիայում: «Բանանցը» ստուգողական խաղում ուժերը չափել է Ուկրաինայի առաջին խմբում հանդես եկող «Տեղիցե» թիմի հետ: Խաղն ավարտվել է «Բանանցի» հաղթանակով շնորհիվ թիմի լեգեոնական Էուջին Սեթուկայի խփած միակ գոլի:

Գավաթը Թուրքմենստանի չեմպիոնին

Ազգաբադում վերջնագիծը հասավ «Թուրքմենբաշու գավաթի» 13-rդ խաղարկությունը: Վճռորոշ խաղում գավաթը եւ 20 հազար դոլար պարգեւավճարը վիճարկեցին Թուրքմենստանի չեմպիոն ու գավաթակիր ՍՍՀՄ-ն եւ առաջնության բրոնզե մրցանակակիր «Ազգաբադը»: Համառ մրցապայքարում հաղթելով մրցակցին 3-2 հաշվով՝ մրցաշարի հաղթող դարձավ ՍՍՀՄ-ն: «Ազգաբադն» արժանացավ 10 հազար դոլար պարգեւավճարի:

3-rդ տեղի հասար մրցավեճում ուժերը չափեցին ուկրաինական «Վորսկլան» ու Ղազախստանի «Օրդաբասին»: Մրցակիցներին այդպես էլ չհաջողվեց գտնել դարպասի բանալին: Հաղթողը որոշվեց 11մ հարվածաշարով (10-9): Ընդ որում՝ վերջին՝ վճռորոշ գոլն իր գործընկերոջ դարպասը խփեց «Վորսկլայի» դարպասապահ Օլեգ Չուվաեւը՝ հաղթանակ պարգեւելով իր թիմին: Իսկ մինչ այդ նա հետ էր մղել «Օրդաբասիի» դարպասապահի 11մ հարվածը: «Վորսկլան» գրավեց 3-rդ տեղն ու արժանացավ 5 հազար դոլար պարգեւավճարի:

Մրցաշարի լավագույն ֆուտբոլիստ ճանաչվեց ՍՍՀՄ-ի 30-ամյա խաղացող-մարզիչ Յազկուլի Խոջաքելդիեւը: Իսկ լավագույն ռմբարկուի մրցանակը հանձնվեց նրա խաղընկեր Գահրիմանբերդի Չոնկաեւին, որն իր հաշվին 3 գոլ էր գրանցել:

Կրոսբին գերազանցեց Գրեցկու ցուցանիշը

Հոկեյի ազգային լիգայի «Պիտսբուրգ» թիմի հարձակվող Սիդնի Կրոսբին «Կարոլինայի» հետ խաղում գրավելով մրցակցի դարպասը, հոկեյիստի իր կենսագրությունում 200-rդ միավորը վաստակեց: Այսպիսով, 19-ամյա Կրոսբին դարձավ հոկեյի ազգային լիգայի պատմության մեջ ամենաերիտասարդ հոկեյիստը, որ նման արդյունքի է հասնում: Նա գերազանցեց լեգենդար Ուեյն Գրեցկու արդյունքը, որը նման ցուցանիշի էր հասել 20 տարեկանում:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Չիդանը գլխավորում է ֆրանսիացի ամենահարուստ մարզիկների ցանկը

Ֆուտբոլին հրաժեշտ տալը բնավ էլ չխանգարեց Զինեդին Զիդանին գլխավորել ֆրանսիացի ամենահարուստ մարզիկների ցանկը, որը հրապարակել է ֆրանսիական մարզական «Էկիպ մագազին» շաբաթաթերթը: 2006 թ. Զիդանի ընդհանուր տարեկան եկամուտը կազմել է 13 մլն եվրո: Նախորդ տարվա համեմատ թեեւ Զիդանը 1,6 մլն եվրո պակաս է վաստակել, սակայն գլխավորում է ամենահարուստ ֆրանսիացի մարզիկների ցուցակը: Զիդանի եկամտի մեծ մասը ստացվում է «Ադիդաս», «Դանոն», «Աուդի» եւ այլ ֆիրմաների ու ընկերությունների արտադրանքը գովազդելուց: Ընդհանուր գումարը կազմում է 9,1 մլն եվրո: Գովազդային փորձագետների կարծիքով Զիդանի կերպարը նախկինի պես գրավում է ֆիրմաների ղեկավարներին:

Ցուցակում 2-rդ հորիզոնականում է Ֆրանսիայի հավաքականում Զիդանի նախկին թիմակից Թյերի Անրին: Նա իր եկամուտն ավելացրել է 2,7 մլն եվրոյով՝ այն հասցնելով 12,4 մլն եվրոյի: «Արսենալը» նրա ամսական աշխատավարձը 436 հազար եվրոյից բարձրացրել էր մինչեւ 672 հազար եվրո, որպեսզի ֆուտբոլիստը չտեղափոխվեր «Բարսելոն»: Բացի այդ, նա ավելի շահավետ պայմաններով վերակնքել էր գովազդային իր պայմանագիրը՝ դրանցից ստացվելիք ընդհանուր եկամուտը հասցնելով 5 մլն եվրոյի:

Ամենահարուստ մարզիկների եռյակը եզրափակում է բասկետբոլիստ Տոնի Պարկերը՝ 9,8 մլն եվրո: Նախորդ ցուցակի համեմատ Պարկերը երկու հորիզոնական վեր է բարձրացել՝ եկամուտն ավելացնելով 4,2 մլն եվրոյով: Պարկերի առավելությունն այն է, որ նա հանրաճանաչ է ինչպես Եվրոպայում, այնպես էլ ԱՄՆ-ում, ինչը հնարավորություն է տալիս «Նայք» ֆիրմային երկու շուկաներում էլ օգտագործել բասկետբոլիստի կերպարն իր արտադրանքը գովազդելու համար: Պարկերի փառքին նպաստում է նաեւ սիրավեպը հանրահայտ դերասանուհի Եվա Լոնգորիայի հետ: 4-5-rդ տեղում կրկին ֆուտբոլիստներ են՝ Կլոդ Մակելելեն ու Պատրիկ Վիեյրան (7,2 մլն եվրո): 6-rդ հորիզոնականում թենիսիստուհի Ամելի Մորեսմոն է (6,8 մլն եվրո), որը նախորդ ցուցակի համեմատ 9 տեղով առաջադիմել է՝ եկամուտն ավելացնելով 2,8 մլն եվրոյով: Մորեսմոն միակ մարզուհին է 50 ամենահարուստ ֆրանսիացի մարզիկների ցուցակում: Լավագույն տասնյակը եզրափակողները եւս ֆուտբոլիստներ են՝ Լիլիան Թյուրամը (6,1 մլն եվրո), Վիլյամ Գալասը (5,8), Դավիթ Տրեզեգեն (5,7) եւ Վիլի Սանյոլը (5,2): Վերջինս յուրօրինակ ռեկորդակիր է. նա 15 տեղով առաջադիմել է:

Ընդհանրապես, 50 ամենահարուստ մարզիկների ցանկում ֆուտբոլիստների թիվը գերակշռում է: Նախորդ ցանկի համեմատ նրանց թիվը 38-ից հասել է 44-ի: Իսկ տասնյակի ներքին շեմն աճել է (4,9-ից 5,2 մլն եվրո): Զգալիորեն աճել է նաեւ 10 լավագույնների ընդհանուր եկամուտը եւ կազմում է 50 մարզիկների ընդհանուր եկամտի (194 մլն եվրո) կեսից ավելին:

Ըստ «Էկիպ մագազինի»՝ մնացած 6850 ֆրանսիացի պրոֆեսիոնալ մարզիկների եկամուտը շատ փոքր է: Նրանք երջանիկ կլինեին, եթե ամսական վաստակեին 4777 եվրո, այնքան, որքան Զիդանը որպես տուգանք վճարեց ՖԻՖԱ-ին Մատերացիին գլխով հարվածելու համար:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը դոլարիզացիայի հաղթահարման եւ ազգային արժույթի նկատմամբ վստահության բարձրացման խնդրի լավագույն լուսաբանման համար հայտարարում է մրցույթ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը զանգվածային լրատվության միջոցների (ռադիո, հեռուստատեսություն, տպագիր մամուլ, լրատվական գործակալություն) շրջանում հայտարարում է բաց մրցույթ՝ 2007 թ. ընթացքում դոլարիզացիայի հաղթահարման եւ ազգային արժույթի նկատմամբ վստահության բարձրացման խնդրի լավագույն լուսաբանման համար:

Լրագրողները կարող են իրենց ռադիո - հեռուստահաղորդումները եւ հոդվածները ներկայացնել Հայաստանի Հանրապետություն կենտրոնական բանկ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով, էլ-փոստ՝ փոստ՝ info@cba.am:

Մրցութային հայտերի ընդունման վերջին ժամկետն է 2007 թ. նոյեմբերի 10, ժամը 17:00:

Մրցույթի հայտերը կամփոփվեն 2007 թ. նոյեմբերի 22-ին՝ ազգային դրամի 14-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում:

Մրցույթի ռադիոյի, հեռուստատեսության, տպագիր մամուլի, լրատվական գործակալության անվանակարգերում հաղթողներից յուրաքանչյուրը կպարգեւատրվի 150.000 դրամով:

Մրցույթին մասնակցելու հայտարարությունը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am): Մրցույթին մասնակցելու, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մամուլի ծառայություն՝ հեռ. 56-37-61, ներքին՝ 07-02:

ԿԲ մամուլի ծառայություն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) «ՊԳԳ-ԳՀԱՊՁԲ-07/6» ծածկագրով կազմակերպում է գնանշման հարցում՝ **բջջային հեռախոսների լիցքավորման քարտերի ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 700 ՀՀ դրամ փոխանցել «Արդշինինվեստբանկ» «Կոմունալախագիծ» ՓԲԸ-ի N 247010010343 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան Կոմիտասի պ., 54/բ, հեռ.՝ 28-93-25, Վ. Հովհաննիսյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրվա ժամը 11.00-ն:

«Էկոնոմիկա եւ իրավունք» կենտրոն
«ՆՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐԸ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ»
Ամենամսյա սեմինարներ
«Էկոնոմիկա եւ իրավունք» կենտրոն՝ Մ. Բաղրամյան 24դ, 54-24-81, 54-74-81

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից՝ ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, մեկնվում է **«Այլաս-էներգո» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Տավուշի մարզի Այգեձոր համայնքի** վարչական տարածքում խնձորուս գետի վրա (ոչ որոգման սեզոնին) «Այգեձոր-2» ՓՀԷԿ-ի կառուցման ջրառի ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2007 թ. մարտի 14-ին, ժամը 16-00 Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն

ՎԱՃԱՌՎՈՒՄ է
900 քմ
հողատարածք
Արաբկիր
համայնքում
Հեռախոս
(091) 519-006

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԵԿԱՑՆՈՒՄ Է

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ
մրցույթի անցկացման մասին
(ծածկագիր՝ 147-Ն-1)

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2007թ.-ի փետրվարի 8-ի թիվ 147-Ն որոշման 1-ին մասով՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը հրավիրում է մասնավորեցման բոլոր սուբյեկտներին մասնակցելու ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության **«Շավիլուղա»** փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի մասնավորեցման մրցույթին (ծածկագիր՝ 147-Ն-1):

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1.	Ընկերության հասցեն	ք. Վանաձոր, Թեռնոյան 7/1
1.2.	ՀՀ կառավարության որոշման համարը եւ ամսաթիվը	N147-Ն, 08.02.2007թ.
1.3.	Ընկերության շենքերի, շինությունների մակերեսը (մ²)	8445.4
1.4.	Զբաղեցրած հողային տարածքը (հա)	1.6 հա
1.5.	Անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի համարը եւ տրման ամսաթիվը	N988267, 25.09.2001թ.
1.6.	Գործունեության հիմնական տեսակը	Կենցաղային սարքերի արտադրություն
1.7.	Գնահատման ամսաթիվը	19.10.2006թ.
1.8.	Ընկերության բաժնետոմսերի գնահատված արժեքը (հազ. դրամ)	64981

2. Ընկերության հաշվեկշռի ցուցանիշներ (01.07.2006թ. դրությամբ)

(հազ.դրամ)

ՀՀ	Ցուցանիշի անվանումը	Հաշվեկշռային արժեքը	Գնահատված արժեքը
2.1.	Ոչ ընթացիկ ակտիվներ , այդ թվում	4365,577 *	71879,31
2.1.1.	Հիմնական միջոցներ, այդ թվում՝	4355,577	71869,31
	շենքեր եւ շինություններ /1 հա/	3262.453	64486.8
	մեքենաներ եւ սարքավորումներ /101 հա/	844.391	5730.310
	արտ. սնս. գույք, գործիք եւ այլն /63 հա/	248.733	1652.20
2.1.2.	Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	-	-
2.1.3.	Ոչ նյութական ակտիվներ	10	10
2.1.4.	Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	-	-
2.2.	Ընթացիկ ակտիվներ	6882	6882
2.3.	Ոչ ընթացիկ պարտավորություններ	-	-
2.4.	Ընթացիկ պարտավորություններ, այդ թվում	13780	13780
•	ՀՀ բյուջեի նկատմամբ	1470	1470
•	սոց. ապահովագրության գծով	799	799
•	անձնակազմին աշխատանքի վարձատրության գծով	3203	3203
•	առեւտրական կրեդիտ. պարտքեր	7810	7810
•	այլ կրեդիտորական պարտքեր	498	498

* Ներկայացված են հիմնական միջոցների սկզբնական արժեքները

2.5. Համաձայն ՀՀ կառավարության 08.02.2007թ.-ի N147-Ն որոշման, ընկերությունը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ունի շահութաբաժինների գծով 144.6 հազ. դրամի չափով պարտավորություն:

3. Մրցույթին մասնակցելու պայմաններ

3.1 Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն մասնավորեցման այն սուբյեկտները (կամ նրանց լիազոր ներկայացուցիչները), որոնք սահմանված կարգով վճարել են մրցույթի նախավճարը /տես 5.1 եւ 5.2 կետերը/ եւ 5.3 կետում նշված ժամկետում ներկայացրել են մրցութային առաջարկ, որը ներառում է հետեւյալ փաստաթղթերը՝

ա/ հայտ (ձեւը կարելի է ստանալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության 438 սենյակում,

բ/ մրցույթի հաղթողին որոշելու պայմանների վերաբերյալ գրավոր առաջարկ՝ (տես՝ 3.12 կետը),

գ/ մրցույթի նախավճարի կատարման իսկությունը հաստատող վճարային փաստաթղթերի պատճենները,

դ/ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող մասնակիցների գրանցման եւ հիմնադիր փաստաթղթերի պատճենները,

ե/ լիազորագիր՝ մրցույթի մասնակից ընկերության /հաստատված տվյալ ընկերության կողմից/ կամ ֆիզիկական անձի /հաստատված նոտարական կարգով/ կողմից լիազորված անձի համար,

զ/ գործարար ծրագիր:

3.2. Մրցութային առաջարկը փակ ծրարով ներկայացվում է ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն, 438 սենյակ՝ մինչեւ 5.3 կետում նշված ժամկետի լրանալը:

3.3 Մրցույթի մասնակիցների՝ մրցութային պայմաններին համապատասխան ներկայացրած առաջարկությունները պետք է արտահայտված լինեն թվային ցուցանիշներով եւ փոքր չլինեն ՀՀ կառավարության կողմից սահմանված նվազագույն արժեքներից, եթե դրանք սահմանված են (տես 3.12. կետը):

3.4 Մրցութային առաջարկները ներկայացվում են հայերեն լեզվով, իսկ օտար լեզուներով գրված փաստաթղթերը կարող են ուղեկցվել թարգմանություններով: Թարգմանությունների բացակայության դեպքում փաստաթղթերը կթարգմանվեն հանձնաժողովի կողմից:

3.5 Մրցույթին ներկայացվող փաստաթղթերը ներկայացվում են տպագիր կամ պարզ ընթեռնելի ձեռագրով:

3.6 Ծրարը պետք է հաստատված լինի մրցութային հանձնաժողովին՝ նշելով մասնավորեցվող օբյեկտի անվանումը:

3.7 Մրցութային առաջարկները կարող են ընդունվել նաեւ ֆաքսիմիլային կապով: Ստացված փաստաթղթերը ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունում դրվում են ծրարի մեջ եւ փակվում:

3.8 Ներկայացված ծրարները կնքվում եւ մուտագրվում են ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունում:

3.9 5.3. կետում նշված ժամկետի լրանալուց հետո ներկայացված առաջարկները չեն ընդունվի:

3.10 Դիմողները մինչեւ 5.3. կետում նշված ժամկետի լրանալը կարող են հանձնաժողովին գրավոր դիմում ներկայացնել՝ մրցույթին չմասնակցելու վերաբերյալ: Սահմանված ժամկետից ուշ ներկայացրած այդպիսի դիմումները քննարկման ենթակա չեն:

3.11 Մրցույթի պահանջներին մրցութային առաջարկի անհամապատասխանության դեպքում մրցութային առաջարկ ներկայացրած սուբյեկտին մրցույթի մասնակցի կարգավիճակ չի տրվում եւ մրցութային առաջարկը հանվում է հետագա քննարկումից:

3.12 Մրցույթի հաղթողի որոշման համար առաջադրվում են հետեւյալ պայմանները.

մասնավորեցվող բաժնետոմսերի համար առաջարկվող գինը /նվազագույն գինը՝ 16245 հազ.դրամ/,

ներդրումների չափը՝ տարիների կտրվածքով,

սոցիալական երաշխիքներ, այդ թվում աշխատատեղերի (ներկայացվում է մարդ/ամսով) եւ միջին աշխատավարձի վերաբերյալ:

3.13 Մրցույթի հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որի առաջարկը առավելագույն չափով է բավարարում մրցույթի պայմաններին:

4. Վճարումներ եւ պայմանագրի կնքում

4.1 Մրցույթի հաղթողը 10-օրյա ժամկետում ստանում է մրցույթի արդյունքների հաստատված արձանագրության օրինակ: Մրցույթի մյուս մասնակիցները կարող են ստանալ արձանագրության պատճենները:

4.2 Մրցույթի հաղթողը բաժնետոմսերի վաճառքի գումարը պետք է վճարի մրցույթի արձանագրությունը ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում, ՀՀ արժույթով՝ բաժնետոմսերի վաճառքի գնի 70 տոկոսն ուղղելով ՀՀ պետական բյուջե, իսկ 30 տոկոսը՝ համապատասխան հաշվի ֆոնդային բյուջե՝ ըստ գույքի գտնվելու վայրի:

4.3 Որպես մրցույթի նախավճար վճարված գումարն ընդգրկվում է օբյեկտի վաճառքի գնի մեջ եւ մրցույթում չհաղթելու կամ մինչեւ 5.3 կետում նշված ժամկետի լրանալը մրցույթին մասնակցելուց հրաժարվելու դեպքում հետ է վերադարձվում:

4.4 Համաձայն ՀՀ կառավարության 08.02.07թ. N 147-Ն որոշման, մրցույթի հաղթողի կողմից առաջարկված գնի վճարումից հետո մեկամսյա ժամկետում ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը գնորդի հետ կկնքի մասնավորեցման պայմանագիր՝ դրանում նախատեսելով, որ գնորդը պարտավորվում է իր միջոցների հաշվին վճարել գույքի արժեքի որոշման հետ կապված վճարը՝ 376672 դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը), ինչպես նաեւ գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.5 Սահմանված ժամկետում վճարումները չկատարելու եւ պայմանագիրը չկնքելու դեպքում մրցույթի հաղթողի վճարած նախավճարի գումարը նրան հետ չի վերադարձվում, եւ մրցույթը հանվում է չկայացած:

4.6 Մրցույթով մասնավորեցման արդյունքում գնորդը հանդիսանում է նաեւ գնահատման պահից հետո առաջացած իրավունքների եւ պարտավորությունների իրավահաջորդը:

5. Մրցույթի անցկացման այլ պայմաններ

5.1	Մրցույթի նախավճարի չափը	812250 դրամ
5.2	Մրցույթի նախավճարի մուտագրման հաշվի հաշիվը	Թիվ1 տեղական գանձարքեսական բաժանմունք դրամային - 900013145017
5.3	Մրցութային առաջարկի ներկայացման վերջին ժամկետը	2007 թվականի ապրիլի 16-ը , ժամը՝ 13:00
5.4	Մրցութային առաջարկի ներկայացման վայրը	ք.Երեւան, Տիգրան Մեծ-4 ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն, 438 սենյակ
5.5	Մրցույթի անցկացման օրը, ժամը եւ վայրը	2007 թվականի ապրիլի 20-ը , ժամը՝ 15:00 ք.Երեւան, Տիգրան Մեծ-4 ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն
5.6	Ֆաքսիմիլային կապ	*(3741) 27-65-94*
5.7	Կայքէջ	*http: //www.privatization.am*

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել հետեւյալ հեռախոսահամարով: ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն 58-14-41

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը վարձակալությամբ տրամադրում է տարածքներ:

Հասցե	Ազատ տարածք	(մ²)
ք. Երեւան, Ծ. Իսակովի պող. թիվ 10	7-րդ հարկ	30.0
ք. Երեւան, Բալմոնի փող. թիվ 5	1-ին հարկ	7.18
ք. Երեւան, Ավանեսովի 1,		
1-ին մասնաշենք	կիսանկուղային հարկ	334.0
	1-ին հարկ	284.4
	2-րդ հարկ	284.4
	3-րդ հարկ	222.4
	4-րդ հարկ	222.4
2-րդ մասնաշենք	1-ին հարկ	594.8
	2-րդ հարկ	534.0
ք. Եղեգնաձոր, Շահումյան 5	1-ին հարկ	32.2

Անհրաժեշտության դեպքում զանգահարել 52-24-72 հեռախոսահամարով կամ դիմել ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության «Պետական գույքի գույքագրման եւ գնահատման գործակալություն» ՊՈԱԿ, Երեւան, Զաքիյան-10 հասցեով:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, սերտագրված է տպագրության՝ 7.02.2007, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունյաց 2: